




ՄԱՅՐ ԱՅՐՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հայտարարությունը

Փետրվարի 25-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հանդես եկավ հայտարարությամբ, որում ասվում է.

«Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, տեղեկանալով բարձրագույն հրամանատարական կազմի և դրան հաջորդած <<Վարչապետի հայտարարությունների մասին, խոր մտահոգությամբ հետևում է դրանց շուրջ ընթացող զարգացումներին: Հետպատերազմյան ճգնաժամային այս իրավիճակում, երբ հայրենիքը դիմագրավում է քաղաքական, տնտեսական և հասարակական բազմաթիվ մարտահրավերների, մեղադրանքների և քաղաքական հաշվեհարդարների չընդհատվող կոչերը փոխանցում են ազգային միաբանությունն ու անվտանգությունը:



Մայր Աթոռը անդուշատելի և կործանարար է համարում իրավիճակի հետագա սրումը՝ կոչ անելով մեր ժողովրդին դրսևորել խոհեմություն և պատասխանատվություն, չտրվել սաղոսանքներին և զերծ մնալ քաղաքացիական բախումներից:

Մայր Աթոռը հորդորում է <<Նախագահին, վարչապետին, ԱԺ նախագահին, կառավարության անդամներին և բոլոր քաղաքական ուժերի առաջնորդներին ստեղծված ծանրագույն իրավիճակից ելքեր փնտրել բանակցային սեղանի շուրջ՝ ի սեր մեր հայրենիքի և ժողովրդի»:

Թող ամենախնամ Աստված Բր Սուրբ Աջի հովանու ներքո խաղաղության և անդորրի մեջ պահի մեր հայրենի պետությունն ու մեր ժողովրդին»:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

«Համալսարանը գոհվածների ընտանիքների կողքին» նախաձեռնության անդամներին

Փետրվարի 28-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Շայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ Երեւանի պետական համալսարանի տարբեր ֆակուլտետների ուսանողների հետ: Ուսանողները Մայր Աթոռ Ս. Էջմիածին էին եկել Պատմության ֆակուլտետի դեկանի տեղակալ պ. գ. Թ., ողջենտ Միքայել Մալխասյանի առաջնորդությամբ:

Տիար Մալխասյանը, որդիական խոնարհությամբ ողջունելով Նորին Սրբությանը, տեղեկացրեց, որ ներկաները Երեւանի պետական համալսարանի «Համալսարանը գոհվածների ընտանիքների կողքին» նախաձեռնության անդամներն են: Խոսքով հանդես եկավ նաև նախաձեռնության համահեղինակ տիար Էդուարդ Գալստյանը: Վերջինս մշտեց, որ նախաձեռնությունը միտված է նեցուն և զորա-

մը մշտեց, որ մեր նահատակների հիշատակը պետք է մեզ համար ոգեշնչման աղբյուր լինի՝ ապրելու, արարելու և գալիքի նկատմամբ մոր հույսով լցվելու համար: Վեհափառ Հայրապետն անդրադարձավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Աջակցենք Արցախին» ծրագրին և նպատակներին, ինչպես նաև ծրագրի իրագործմանն ի նպաստ աշխարհասփյուռ թեմերի և բարերար հայորդիների կողմից ցուցաբերվող աջակցությանը: Պատերազմի ընթացքում և հետպատերազմյա օրերին եկեղեցու գործունեությանն անդրադառնալով՝ Նորին Սրբությունը տեղեկացրեց, որ կատարվել են ինչպես հոգեխնամական, այնպես էլ սոցիալական աջակցության ծրագրեր, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն իր հնարավորությունների սահմաններում փորձել է լուծել նաև տեղահանված արցախցի ընտանիքների կեցության հարցը:



վիզ լինելու պատերազմի հետևանքով իրենց զավակներին ու հարազատներին կորցրած ընտանիքներին՝ շեշտելով, որ եկեղեցին, իր առաքելությամբ հավատարիմ, անփոխարինելի ներդրում է բերում այս ուղղությամբ:

Ապա Ամենայն Հայոց Կաթողիկոսը ողջունեց երիտասարդ ուսանողների նախաձեռնությունը՝ բերելով իր հայրապետական գնահատանքն ու օրհնությունը: Հայոց Հոգևորականության և կարեւոր համարեց ներկաների նախաձեռնությունը՝ ընդգծելով, որ յուրաքանչյուրի պարտքն ու պարտականությունն է այս դժվարին պահին զորակցել այդ ընտանիքներին:

Խոսելով արցախյան երկրորդ պատերազմի կորուսանների մասին՝ Նորին Սրբությունը

Հայոց Հայրապետը երիտասարդների հետ խոսեց նաև վիրավորների, գոհվածների, գերության մեջ հայտնվածների և անհայտ կորածների ընտանիքներին հոգեւոր խնամքի կարելություն մասին: Այս կապակցությամբ իրազեկվեց, որ, նկատի ունենալով խնդրի նրբությունը, հոգեւորականների համար կազմակերպվել են վերապատրաստման հատուկ դասընթացներ՝ համապատասխան մասնագետների ներգրավմամբ: Նորին Սրբությունը տեղեկացրեց, որ ապագայում նախատեսվում է Մայր Աթոռին և վանքերին կից ստեղծել վերականգնողական կենտրոններ:

Վերջում հանդիպման մասնակիցներն իրենց հուզող հարցերն ուղղեցին Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը Սումգայիթի գոհերի հիւսանակի ոգեկոչման առիթով

Միտելի՛ բարեպաշտ ժողովուրդ,
Այսօր ոգեկոչում ենք 1988 թ. Ադրբեջանի իշխանությունների կողմից կազմակերպված Սումգայիթի ջարդերի զոհերի հիշատակը:

Խորհրդային Միության փլուզումից հետո անկախացան Միության կազմում գտնվող երկրները, և Արցախի մեր ժողովուրդը նույնպես ինքնորոշման իրավունքով հռչակեց անկախ ապրելու իր կամքը: Այս արդար որոշման դեմ Ադրբեջանի ողջ տարածքում ձեռնարկվեցին հայորդիների ջարդ ու կոտորած: Սումգայիթյան ոճրագործությունների կազմակերպիչները ծրագրած նոր եղեռնագործությամբ պարբերաբար զինված հարձակումների էին ենթարկում Արցախն ու Հայաստանի սահմանամերձ շրջանները: Անցյալ տարի Ադրբեջանը Թուրքիայի և ահաբեկչական խմբավորումների հետ լայնածավալ ռազմական գործողություններ ձեռնարկեց Արցախի Հանրապետության դեմ՝ դաժանաբար զնդակոծելով երկրի տարածքը: Չոհվեցին խաղաղ բնակիչներ, հայրենյաց պաշտպան մեր շատ զավակներ, տեղահանվեցին բազմահազար հայորդիներ, ավիրվեցին հոգեւոր-մշակութային կոթողներ ու հուշարձաններ, կորցրեցինք Արցախի զգալի մասը, և դեռ կան անհայտ կորածներ ու գերեզմաններ: Ցավով ենք անդադառնում, որ պատերազմի դադարից հետո տակավին տեղ են գտնում բռնություններ ու չարագործություններ, ոտնահարվում մեր երկրի ու ժողովրդի իրավունքները: Այս ողբերգական իրողությունները, արցախյան երկրորդ պատերազմի արհավիրքները վկայում են, որ Արցախը չի կարող լինել Ադրբեջանի կազմում:

Միտելիներ, պատերազմի պատճառած կորուստների ցավը մեր սրտերում միասնաբար ամեն ջանք ի գործ պիտի դնենք՝ հաղթահարելու աղետալի հետևանքներն ու փորձությունները, գործակելու մեր հայրենիքը և կերտելու մեր կյանքի նոր ձեռքբերումներն ու հաջողությունները:

Խոնարհվելով մեր զոհերի վառ հիշատակի առջև՝ ի խորոց սրտի աղոթում ենք նրանց հոգիների հանգստության ու խաղաղության համար: Հայցում ենք, որ Աստված Բր ողորմությունը, շնորհներն ու բարեգոյությունը տարածյալ պահի համայն մեր ժողովրդի և մեր հայրենիքի վրա և պահպանի ամենախնամ Բր Սուրբ Աջի հովանու ներքո. ամեն:

Գերագույն հոգեւոր խորհուրդն ավարտեց իր աշխատանքները

Փետրվարի 23-ից 26-ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ճայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ Գերագույն հոգեւոր խորհրդի ժողով՝ ընդլայնված կազմով: Ժողովի նիստերն ատենապետեց Մայր Աթոռի Եկեղեցական հայեցակարգային բաժնի տնօրեն Վազգեն եպս Միրզախանյանը:

Մինչ օրակարգին անդրադառնալը ժողովակազմները աղոթեցին անցյալ տարի ի Տեր մեջք եւ արցախյան պատերազմում զոհված եկեղեցականների համար, որից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսը ժողովի առիթով ամենքին բերեց հայրապետական իր օրհնությունն ու պատգամը:

Քառօրյա ժողովի ընթացքում քննարկվեցին պատերազմի հետեւանքով արձանագրված կորուստների, ներքաղաքական իրավիճակի, հետպատերազմյան վտանգների, զոհվածների ընտանիքներին,

ԳՀԽ անդամները կարեւորեցին եկեղեցու հետեւողական ջանքերը՝ ի նպաստ հանրային կյանքում առկա զանազան մարտահրավերների հաղթահարման: Կենսական նկատվեց անհրաժեշտ հոգեւոր խնամքի հետ մեկտեղ շարունակելու դեռեւս պատերազմի օրերին եկեղեցու նախաձեռնած հունամիտար աջակցության ծրագրերը՝ թեթեւացնելու պատերազմի հետեւանքով առաջացած սոցիալական խնդիրները, նպաստելու Հայաստանում ապաստան գտած արցախցի ընտանիքներին՝ հնարավորության դեպքում վերադառնալ իրենց բնակության վայրերը:

Գերագույն հոգեւոր խորհուրդն ի մասնավորի թելադրեց շարունակել գերության մեջ հայտնվածների վերադարձի եւ անհայտ կորածների հայտնաբերման ուղղությամբ տարվող աշխատանքները:

Առանձնակի մտահոգությունն արտահայտվեց ՀՀ զինված ուժերի հրամանա-

բի ղեկույցը՝ ԿԳՄՍ նախարարության կողմից նախաձեռնված կրթական բարեփոխումների եւ ի մասնավորի՝ հանրակրթական դպրոցում «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի հետագա դասավանդման շուրջ նախարարության ներկայացուցիչների հետ ունեցած քննարկումների արդյունքների վերաբերյալ: Տեղեկացվեց, որ եմթախումբը կրթական բարեփոխումների կարեւորությունը դիտարկում է ապագա սերնդի բացառաբար հոգեւոր-ազգային կրթության եւ դաստիարակության համատեքստում եւ այս ուղղությամբ պնդում է Հայոց եկեղեցու պատմության ամբողջական ծավալով, իբրեւ առանձին առարկա ուսուցման անհրաժեշտությունը: Միաժամանակ մտահոգությունն արտահայտվեց պետական լիազոր համապատասխան մարմնի կողմից առարկայի առկայության որոշեցված ոչ ընդունելի մոտեցումների կապակցությամբ:

Գերագույն հոգեւոր խորհուրդը, ընդգծելով «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի դասավանդման կարեւորությունը, թելադրեց ենթախմբին մեկ անգամ եւս գրությամբ ԿԳՄՍ նախարարության ուշադրությանը հանձնել «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի դասավանդման հետ կապված եկեղեցու դիրքորոշումները: Քննության առնվեցին նաեւ բարեգործական որակվող ծրագրերի շրջանակներում Մայր Աթոռի կողմից իրականացվող մի շարք ծառայությունների եւ աշխատանքների հետ կապված հարցեր: Ընդգծվեց, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարեգործական մի շարք ծրագրեր պետական համապատասխան լիազոր կառույցի կողմից որակվել են որպես այդպիսին, եւ աշխատանքներն այդ ուղղությամբ ընթանում են: Միաժամանակ մտահոգությամբ



արձանագրվեց, որ որոշ խնդիրներ են առաջացել Մայր Աթոռի կողմից ներկրվող ապրանքների, մասնավորապես՝ մոմի հումքի մաքսագերծման հարցում: Առաջացած հիշյալ խնդիրների պատճառով էապես նվազել են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մոմերի պաշարները, ինչն առաջիկայում դժվարացնելու է եկեղեցիներում մոմավառության պատշաճ կազմակերպման գործընթացը:

Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներն իրենց տարակուսանքն արտահայտեցին դրսեւորված ման մոտեցումների առիթով՝ նկատի ունենալով, որ եկեղեցին երբեւէ, անգամ խորհրդային շրջանում, ման դժվարությունների առջեւ չի գտնվել: Գերագույն հոգեւոր խորհուրդը թելադրեց Մայր Աթոռի համապատասխան կառույցներին՝ պետական պատկան մարմինների հետ քննարկել հիշյալ խնդիրները եւ հետամուտ լինել դրանց կարգավորմանը:

Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովում լսվեցին ղեկույցներ, ծավալվեցին քննարկումներ՝ Ազգային-Եկեղեցական ժողովի գումարման կազմակերպչական աշխատանքների, Մայր տաճարի ամրակայման եւ հիմնանորոգության ընթացքի մասին: Ներկայացվեց նաեւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի 2020 թվականի գործունեության տեղեկագիրը:

Ժողովը փակվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի գնահատանքի խոսքով եւ աղոթքով:



րի, գերության մեջ հայտնվածների, անհայտ կորածների, պատերազմից տուժած մյուս անձանց, ինչպես նաեւ Արցախի հոգեւոր-մշակութային ժառանգության պահպանության հետ առնչված խնդիրներ, եւ անդրադարձ կատարվեց հիշյալ հարցերի ուղղությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կողմից ձեռնարկվող քայլերին:

տարության՝ փետրվարի 25-ի հայտարարության եւ վարչապետի արձագանքին հետեւած նոր լարվածության կապակցությամբ, որի առնչությամբ Գերագույն հոգեւոր խորհուրդը հանդես եկավ առանձին հայտարարությամբ:

ԳՀԽ անդամներին ներկայացվեց նաեւ Մայր Աթոռի կրթական հարցերով ենթախմ-

Գերագույն հոգեւոր խորհրդի հայտարարությունը

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարված Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովի ընթացքում անդրադարձ կատարելով արցախյան պատերազմին, Հայաստանի ու Արցախի առջեւ ծառացած հետպատերազմյան ներքին եւ արտաքին մարտահրավերներին, նաեւ համակողմանիորեն քննարկելով հայրենիքում տեղ գտնող զարգացումները, մասնավորապես՝ փետրվարի 25-ին ՀՀ զինված ուժերի հրամանատարության հայտարարության եւ ՀՀ վարչապետի արձագանքի առիթով ստեղծված դժվարին կացությունը՝ մեր խոր մտահոգությունն ենք արտահայտում:

— պատերազմի հետեւանքով հայրենիքում տիրող քաղաքական ծանր իրադրության առնչությամբ, որն օրեցօր խորացնում է տնտեսական, սոցիալական եւ հասարակական խնդիրները, էլ ավելի ծանրացնում բարոյահոգեբանական անկյալ վիճակը,

— առկա իրավիճակի հաղթահարման ուղղությամբ ՀՀ իշխանությունների կատարած քայլերի անարդյունավետության, հասարակական-քաղաքական կարեւորագույն հարցերի վերաբերյալ խնդրահարույց դիրքորոշումների առնչությամբ, որոնք հանգեցնելու են նոր պառակտումների, առկա ներքին եւ արտաքին մարտահրավերների ահագնացման, հայրենիքի ապագայի հանդեպ անվստահության արմատավորման եւ արտագաղթի լուրջ սպառնալիք դառնալով Հայաստանի անվտանգության եւ Արցախի հետագա վերականգնման ու առաջընթացի համար:

Անընդունելի ենք նկատում քաղաքա-

կան պայքարի շրջանակներում սերմանվող ատելությունը եւ անհանդուրժողականությունը, փոխադարձ անարգանքն ու հայիոյախոսությունը, քաղաքացիների

— մեր ժողովրդի զավակներին՝ պահպանել հանդարտություն, վարվել խոհեմությամբ, օրինահարգությամբ եւ ամենայն պատասխանատվությամբ՝ չհաղարելով լի-



զգացմունքների շահարկումը, ի հետեւանս որոնք նաեւ երկրի հեղինակագրկումը միջազգային հանրության առջեւ:

Հորդորում ենք՝

— իրավապահ մարմիններին՝ գերծ մնալ խաղաղ ցույցերի եւ հավաքների ժամանակ բռնություններից եւ անհամաչափ ուժի կիրառությունից,

նել նախանձախնդիր եւ հետեւողական հայրենիքի շահերի պաշտպանության գործում: Վերահաստատելով առկա կացության հանգուցալուծման շուրջ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արտահայտած դիրքորոշումները եւ օրհասական վիճակիլը լրջագույն ցուցիչ դիտարկելով հայրենիքի անվտանգության երաշխավոր հանդիսացող Հայոց

բանակի որոշեցրած մտահոգ կեցվածքը՝ կոչ ենք անում Ազգային ժողովին եւ իշխանության մյուս կառույցներին՝ անհրաժեշտ հետեւություններն անել եւ պատասխանատվության բարձր գիտակցությամբ գործել ի սեր հայրենիքի եւ ազգի՝ նոր հիասթափությունների չառաջնորդելու մեր ժողովրդին հայրենիքում եւ սփյուռքում:

Կոչ ենք անում ՀՀ իշխանություններին եւ ընդդիմադիր ուժերին՝ նպաստել համերաշխության հաստատմանը եւ խնդիրների հանգուցալուծումը փնտրել միմիայն համազգային ներուժի համախմբման մեջ՝ հեռու պահելով ժողովրդին հնարավոր բախումներից:

Նաեւ հորդորում ենք զգուշավորություն դրսեւորել Հայոց բանակի եւ զորականների առնչությամբ գնահատականների հարցում եւ նպաստել մեր բանակի սրբազան առաքելության արգասավորմանը:

Ստեղծված իրավիճակում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին պիտի շարունակի ամենայն ջանք ի գործ դնել լարված մթնոլորտի լիցքաթափման եւ ներհասարակական միասնականության ու համերաշխության վերականգնման ուղղությամբ:

Աղոթում ենք ձգնաժամի արժանապատիվ հաղթահարման համար՝ հայցելով ամենողորմ Աստծուն Իր Սուրբ Աջի հովանու ներքո անվտանգ եւ խաղաղ պահել հայրենի մեր երկիրը եւ մեր ժողովրդին:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

ՄՈՒՇԵՂ ԳԱԼՇՈՅԱՆ

Սկզբը՝ թիվ 3

Փաստորեն՝ շուրջ երկու տասնամյակ տեւած ստեղծագործական կյանք ունեցավ Գալշոյանը. անչափ կարճ ժամանակ հատկապես արձակագրի համար: Քիչ բան չհասցրեց անել այդ տարիներին, բայց շատ բան էլ մնաց թերի, անավարտ... 1980 թ. հոկտեմբերի 15-ին վրա հասած ողբերգական մահին ավարտեց նրա կյանքի երկրային ժամանակը, բայց գրողի ճանապարհը դեպի իր ընթերցողը կանգ չառավ: Հետմահու լույս տեսան նրա «Բովոուն» (1982) եւ «Ձորի Միրոն» (1983) ծավալուն ժողովածուները, որոնք ընդգրկում են նախկինում հրատարակված գեղարվեստական գործերը, ակնարկներն ու հոդվածները, նաեւ որոշ անավարտ ու անտիպ էջեր: Դրանից հետո լույս տեսան նորահայտ հավաքածուներ՝ «Պայուսակը» (1988), «Ազգավաքար» (1990), «Քեզ վերելից չպետք է մայել» (1990), որոնցում ի մի են բերված ինչպես տպագիր, այնպես էլ անտիպ բազմաթիվ գեղարվեստական գործեր, ակնարկներ ու հոդվածներ: Սա նշանակում է, որ գրողի բացակայությամբ անգամ շարունակվել է նրա ընդհատված գրական ուղին:

Այո, ցավալիորեն կարճ, բայց գրողի համար բովանդակալից կյանք ապրեց Մ. Գալշոյանը: Մինչ նրա վիպական ստեղծագործություններին անդրադառնալը, անհրաժեշտ է հետեւել նրա գրական ճանապարհին, որն սկսվում է ակնարկներով: Շատ են այդ ակնարկները, բայց հեռու ակնարկի ժանրի համար այն տարիներին պարտադիր կաղապարներից: Դրանք ճշմարիտ գրողի ազնիվ մտահոգությունների արգասիք են՝ շարադրված ցավի, հույսի ու հաստատման զգացողություններով: Դրանք մեկ տաք ու ամփոփական խոսք են՝ ուղղված օրվա հրատապ հարցերին, մեկ ժողովրդի կյանքի ներկա օրերի շրջագծում պատմական անցյալի տագնապալի

հարցադրումներ, մեկ բարոյական անկման վիճակի մտահոգ հարցումներ, մեկ անթաքույց հիացում շենացող մայր երկրի հանդեպ: Տարբեր հարցադրումներ, բայց նյութի ներքին միասնությամբ մեկ գլխավոր հիմնահարց՝ երկիր Նախիրի բախտն ու ճակատագիրը:

Այս տեսակետից ստեղծագործական բուն շիկացման արգասիք է «Ազգավաքար» մտորումը, որ նախնական տարբերակով «Գարուն»-ում տպագրվել է «Չանգեզուրյան աշուն» վերնագրով: Մինչ ակնարկը շարադրելը՝ գրողը երկարատեւ գործուղման էր մեկնել Հայաստանի հարավային շրջանները, կուտակել հարուստ փաստական նյութ, ներկան լավ ըմբռնելու համար թերթի պատմիչների մատյանները: Այդ ամենը նա պիտի ի մի բերեր եւ շարադրեր Մոսկվայում՝ գրական ինստիտուտում ուսանելու տարիներին: Տարածությունում ու հեռավորությունում միշտ էլ ուժեղացնում են կարոտի զգացողությունը, ավելի հստակեցնում ապրածի ու տեսածի ուրվագծերը: Այդպես եղավ նաեւ «Ազգավաքար»-ի հետ:

Ինչ է պատկերում գրողը եւ ի՞նչ է ասում: Ասում է, որ սպարապետի (այն ժամանակ նրան թույլ չէին տա գրել Գարեգին Նժդեհի) հերոսական պայքարի գնով փրկված երկրամասը օրավուր դատարկվում է իր տոհմիկ բնակիչներից եւ խաղաղ պայմաններում, առանց զենքի ու կրակոցի, հոժար կամքով հիմա տեղը զիջում է դարավոր ոսոխի թափո-



փուկներին, որոնք քոչվորական ցեղախմբերով բնակեցնում են գյուղ գյուղի հետեւից եւ իրենց ոչխարների հոտերով նվաճում սարերն ու ձորերը: Ո՛ր է գնում հայկական գյուղերի երիտասարդությունը: Միթե քաղաքակրթությունը, մեծ քաղաքները, արդյունաբերության զարգացումը պետք է խաբխի բնաշխարհի ազգային կազմը, եւ «զարգացում» ասածը դառնա մահանք, հերթական ու շարունակվող մահանք հայրենի հողից:

Նահանգ, մահանգ, մահանգ... Նահանգ լեզվից, մահանգ սովորույթներից, մահանգ հայրենի հողից, մահանգ արյան գնով պահպանված ծննդավայրից ու հայրենիքից: Ասես հնչում են Շահան Շահնուրի տագնապի կոչնակները: Դեռեւս երկու տասնամյակ առաջ գրողը տեսնում էր այն աղետալի հեռանկարը, ինչ կատարվեց հետագայում: Իսկ նա տեսնում էր, որ թուլանում են Հայաստանի սահմանային գյուղերը, որ ուժեղանում է հարեւա-

նի թաքուն կամ բացահայտ արտահայտված բռնատիրական նկրտումը: Գալշոյանի մտորումի ամբողջ էությունն այն էր, որ պետք է ամրապնդել Հայաստանի սահմանները, դրանով իսկ ամուր հիմք ստեղծել գաղութային լծի տակ գտնվող արցախահայությանը սատար կանգնելու համար: Բայց ի՞նչ էր լսողը, ի՞նչ էր գրողի մտահոգությունները պետական քաղաքականության վերածողը: Իսկ հետեւանք... Իսկ հետեւանք 1991-ին ամայացող եւ իր բնակչությունից բռնի ուժով զրկվող հայկական գյուղեր՝ Գետաշեն ու Մարտունաշեն, նույնը՝ նաեւ Շահունյանի ենթաշրջանում, նույնը՝ նաեւ բուն Արցախում: Ունեւհարվում էր ազգային, մարդկային, բարոյական ամեն մի չափանիշ, տորոկում էր գլխավորը՝ ապրելու արժանապատվությունը: Ահա սրա դեմ էր իր տագնապի ծայրը բարձրացնում գրողը:

«Ազգավաքար»-ն աստվածաշնչյան «Գիրք ծննդոց»-ի մի նոր տարբերակ է: Հայոց առաջին «Գիրք ծննդոց»-ը շարադրեց Մովսես Խորենացին, եւ հիա նրանից տասնհինգ դար հետո նրա կրտսերագույն աշակերտը նույն ոգով ու նույն ցավով գրում է. «Հազար նվաճող է քշել Սյունիքի վրա»: Ու նորից կրկնվում է պատմության դասագիրքը. եկան պարսիկները՝ Յուսուֆի գլխավորությամբ, եկան թաթար-մոնղոլները՝ Լենկթեմուրի դրոշի ներքո, Աբդուլա փաշայի առաջնորդությամբ եկան թուրքերը, հետո էլի եկան, նորից եկան, վերստին եկան եւ երախը բաց, այն է, պետք է Չանգեզուրն էլ կուլ տային, բայց այդ պահին նրանց առջեւ կանգնեց սպարապետը եւ «սիսաջան ցեղի քաջ ու պատերազմասեր» այրերով փրկեց Հայաստանի այդ մի պատառիկը: Ուրեմն՝ փառք սպարապետին, բայց մինչ այդ՝ փառք Դավիթ-Քեկին, որովհետեւ սպարապետ Նժդեհը նրա գործն էր շարունակում, նրա հաղթական ոգով էր ներշնչված:

→ էջ 5

Կրակի խորհրդապատկերը Մուշեղ Իշխանի «Կրակը» ժողովածուում



թը, գինին, արեւը, լույսը, բոցը, մոմը, կիրքը, տապը, տենդը, կայծակը, հեշտանքը: Կրակի նշված նշաններն ու դրանց իմաստները նպատակահարմար ենք համարել կարգաբերել համակարգային մի շարք սկզբունքներով՝ նկատի ունենալով կրակի հիմնական գործառնությունները՝ ստեղծման (այսինքն՝ կյանքի), ոչնչացման (այսինքն՝ մահվան), փոխակերպման եւ զոհաբերման:

Իշխանի բանաստեղծություններում արտահայտված են անհատի հոգեւոր ազատության, բնության հետ հաղորդակցվելու միջոցով ինքնակատարելագործվելու, անդրանցական աշխարհի հետ հաղորդակցվելու գաղափարները: Այս բոլորից կարելի է եզրակացնել, որ Մ. Իշխանի ստեղծագործության մեջ դրսևորվում են ամերիկացի փիլիսոփա-մտածող Ռալֆ Ուալթո Էմերսոնի՝ տրանսցենդենտալիզմի փիլիսոփայության մի շարք դրույթներ՝ կրակի նշանների միջոցով ներկայացնելով իրական եւ անդրանցական աշխարհների պատկերը:

Ինչպես շատ գրողների, այնպես էլ Իշխանի ստեղծագործության մեջ կրակի երկու վիճակներ՝ վառվելը եւ մարելը, արտահայտում են գոյության երկու ձեւերը՝ կյանքը եւ մահը: Ուստի գրողի երկերում հետաքրքիր դրսևորում է լուծումներ է ստանում կյանքի եւ մահվան թեման: Քնարական հերոսը տարբեր հոգեվիճակներում առնչվում է մահվան գաղափարի հետ: Եվ կրակը մեծ մասամբ հանդես է գալիս մահվան գաղափարի եւ գիշերվա պատկերների զուգորդումներում: Բանաստեղծություններում երբեմն սրվում է մահազգացողությունը, որը սակայն չի դառնում ողբերգական տրամադրությունների պատճառ: Սրա ապացույց են կրակի՝ բոցկտացող, հուրիքատող, թուլացող, խամրող, սակայն երբեք չմարող պատկերները, որոնք խորքում փրկության հույսի ու անհուսության տագնապ են միախառնում: Դրա վառ օրինակն է «Երգ համեցման ու կարոտի» բանաստեղծությունը, որտեղ քնարական հերոսի՝ քայլ առ քայլ հուսալքվող, սակայն ուրախ օրերի սպասումով ավարտվող հոգեվիճակները ներկայացվում են կրակի ընտրված փոփոխակների եւ նրանց ճառագած լույսի ուժգնությամբ. սկզբում՝ արեւ, հետո՝ լապտեր, վերջում՝ մոմ: Իշխանի՝ մահվան ընկալման մասին եւ

ինքնազննություն պարունակող բանաստեղծությունները կրում են հեղինակի իմաստնության կնիքը եւ դառնում նրա բնավորության գեղագիտական արտահայտությունը: Ակամայից հիշում ես Չարենցի խոսքերը՝ ասված Թումանյանի մասին(տե՛ս Եղիշե Չարենց, Դեմեմեր եւ բանաստեղծություններ, Երեւան, 1984, էջ 564).

....Կարողանամ պիտի ես
Արյոյք, ինչպես նա,
Այդքան հանգիստ ընդունել
Թե՛ անկում, թե՛ մահ.—
Շահ տալ ձեռքով լիառատ
Երգեր ու զանձեր,
Իմաստությամբ անարատ,
Երբ լինեմ ծեր...

Հարկ է նշել, որ Իշխանի քնարերգությունն այս առումով նկատելի աղերսներ ունի իր անմիջական նախորդի եւ ուսուցչի՝ Վ. Թեքեյանի քնարերգության հետ: Գրականագետ Վ. Գաբրիելյանը, գնահատելով Մերձավոր Արեւելքի գաղթաբանների բանաստեղծների՝ Վահե-Վահյանի, Մուշեղ Իշխանի, Անդրանիկ Ճառուկյանի, ժազ Հակոբյանի դերը, հետեւյալ դիտարկումն է անում. «Երիտասարդ բանաստեղծների այս սերունդը հավատարիմ ժառանգորդն էր արեւմտահայ բանաստեղծության ավանդների եւ հատկապես Վահան Թեքեյանի, որ շարունակում էր ապրել ու ստեղծագործել երիտասարդների կողքին՝ իր հարուստ կենսափորձով ու բանաստեղծական վաստակով դառնալով նրանց համար ուսուցիչ: Հենց Մուշեղ Իշխանի հավաստմամբ՝ իրենց սերունդը իր հոգեկան կազմավորումը ստացավ մեծ մասամբ Թեքեյանի քերթվածների ազդեցության տակ» (Վազգեն Գաբրիելյան, Դիտարկումներ գրականության ճանապարհին, Երեւան, 2018, էջ 123): Ասվածի բանաստեղծական վկայությունը կարելի է համարել նաեւ մահվան թեմայով գրված նրանց բանաստեղծությունները, որոնց հիշատակումը, կարծում ենք, անհրաժեշտ է:

Պետք է նկատել, սակայն, որ երկու գրողների մեկնաբանությամբ էլ մահվան խորհուրդն իր ամենօրյա գոյությամբ խորթ չէ մարդկային էությանը: Սակայն եթե Թեքեյանը մահվանը

նայում է սառն անտարբերությամբ, Իշխանի բանաստեղծություններում մահվան նկատմամբ անտարբեր վերաբերմունքին գումարվում է մահվան գովքը, ինչը խորքում անմահության գովքն է: Ահա այստեղ է, որ չենք կարող համաձայնել գրականագետ Գ. Սեւանի այն տեսակետի հետ, թե Մ. Իշխանը հոռետես է եւ գովերգում է մահվան գաղափարը:

Ինչպես արդեն նշվեց, Իշխանի գեղարվեստական տարածությունը կազմում են երկու աշխարհները, որոնց սահմանագծին բնարական հերոսն է՝ երկու տարբեր աշխարհների մասին իր խոհերով ու պատկերացումներով: «Քայլերը մահուան» (Ուշաբժան է բանաստեղծության վերնագիրը՝ «Քայլերգ մահուան»: Գիտենք, որ գրողներն իրենց երկերի վերնագրերի միջոցով ուղղորդում-կարգավորում են ընթերցողի ընկալումները, տեքստը հասկանալու որոշակի մեկնակետ մատնանշում: Ուստի դատողություններ անելիս չպետք է շրջանցենք վերնագրի պոետիկայի հարցը: Քայլերգը երաժշտական ժանր է, որի տարատեսակներից է թաղման կամ սգո քայլերգը: Իշխանի բանաստեղծությունը վերնագրված է «Քայլերգ մահուան», բայց այն վիշտ եւ տխրություն արտահայտելու փոխարեն գրված է «լուսավոր թախծի» (Վ. Տերյան) տրամադրությամբ: Հեղինակը կարծես փորձում է հետ վանել մահվան մասին կարծրացած սարսափելի պատկերացումները, եւ իրեն, եւ ընթերցողին հաշտեցնել մահվան գաղափարի եւ անդերկրյա աշխարհի գոյության փաստի հետ) երկն իր մեջ խտացնում է բանաստեղծական տարբեր գրքերում առկա այդ խոհերը:

Բանաստեղծությունն սկսվում է «խենթ հոգում՝ ձեռք ձեռքի տված այս աշխարհից հեռա՛նալու անմիջական դիմումով», ինչը կազմում է բանաստեղծության նախերգանքը (տե՛ս Մուշեղ Իշխան, Երկեր, Երեւան, 1990, էջ 82).

Ալ հերիք է, խենթ հոգի,
Այս աշխարհին ալ մեկնիմք.
Հանդարտ ու վեհ, ձեռք-ձեռքի,
Դեպի գիշերն աներկիմք,
Իմ խենթ հոգիս, ալ մեկնիմք...

→ էջ 7

ՌԱՓԱՅԷԼ ՊԱՏԿԱՆՑԱՆ (1830–1892)



Սկիզբը՝ 2020-ի թիվ 18–24, 2021-ի թիվ 1–3

«Ազատ երգեր»

Գաղափարական նույն ընդհանրացումն ունի եւ «Մեծ» բանաստեղծությունը, որի հերոսը մեծի անուն ու համբավ ստանալու եւ հոր գովասանքին արժանանալու համար դիմում է տարբեր միջոցների: Բայց «մեծ մարդ» կոչվելու պատվի նա արժանանում է միայն այն ժամանակ, եբք իրեն վտանգի ենթարկելով՝ ազատում է գերված եղբորը եւ վերականգնում թշնամուց ավերված նրա տունը:

Մեծ մարդու անուն դու անժամ ստացար, եղբորդ հիշեցիր ու քեզ մոռացար (1, 166):

Պատկանյալը հայերիս դժբախտությունների եւ կորուստների մեղավոր համարել է ոչ միայն սուլթանական թուրքիային, այլեւ եվրոպական մեծ տերություններին ու նրանց թուրքանապաստ դիվանագիտությանը: «Բողոք առ Եվրոպա», «61-րդ հոդված», «Վեհաժողով», «Հայի արյուն» եւ այլ բանաստեղծություններում Պատկանյալը զայրալից մերկացումնե-

րով ցույց է տվել քրիստոնյա «ապերախտ Եվրոպայի» իրական խարդախ դեմքը, հանուն իր նյութական շահի՝ մեր հայրենիքն ու մեր արյունը՝ մեզ ու մեր երկիրը, թուրքերին պիղատուսաբար զոհաբերելու տմարդությունը: Սան Ստեֆանոյի դաշմագրի՝ Հայաստանի բարենորոգումներին վերաբերող 16-րդ հոդվածը Բեռլինի վեհաժողովում դարձել էր 61-րդ, որով Հայաստանի ճակատագիրը հանձնվում էր թուրքիայի ողորմածությանը: Դրանով փակվում էին Հայաստանի փրկության բոլոր դռները, եւ անպատժելի թուրքն ու թուրքը, չէրքեզն ու լազը, գործելու լիակատար ազատություն ստանալով, հայերին բնաջնջելու եւ Հայաստանը վերացնելու քաղաքականության մեջ իրենց լպիրշությամբ դարձել էին ավելի կատաղի ու մոլեգին:

Վաթսուն ու մեկ հոդված՝ դու Հայաստան խնդդեցիր իսպառ, Հայի սիրտն ու հոգին անխնա արիր պատառ-պատառ: Տաճիկը կատողած է, քյուրդերը գայլի պես կըշռեցեն, Անունը խեղճ Հայի Հայաստանի վերայն կըջընջեն (2, 141):

Եվ սա արվում էր քաղաքակիրթ Եվրոպայի ոչ միայն թույլություններ, այլեւ աշխուրջ հսկողությամբ, որ իր հովանավորած թուրքերի հաղթանակը լիակատար լինի: Սա բորբոքել էր հայերի արդարացի զայրույթը, որն արտահայտվում էր Պատկանյալի «Բողոք առ Եվրոպա» մոլեգին բանաստեղծության մեջ:

Կիրքը, զգացմունքային բուռն պոռթկումը բանաստեղծության մեջ, եթե չունեն համապատասխան գեղարվեստական հիմնավորում, չեն վերածվում ճշմարիտ արվեստի: Սակայն Պատկանյալը սթափ հայացքով է նայում

իրադրություններին ու հանգամանքներին. նա Եվրոպային հիշեցնում է, թե ինչպես էր վաղ միջնադարից ու խաչակրաց արշավանքներից սկսած՝ Հայաստանը վահանի ու պատմեշի պես Արեւելքից եկած բարբարոս խաժամուժի ոսոնձություններից, զրադաշտի եւ իսլամի հարձակումներից պաշտպանում Եվրոպացի քրիստոնյա իր հավատակիցներին: Բայց ապահովության հասած ապերախտ Եվրոպան ոչ միայն չհասկացավ նրանց փրկարար դերը, այլեւ ինքը նպաստեց իր պաշտպանական զրահի՝ Հայաստանի թուլացմանն ու կործանմանը՝ չկռահելով, որ դա հետագայում նաեւ իր կործանումն է լինելու: Նույն այդ Եվրոպան հայերիս առաքինի վարքի, դրական մյուս հատկանիշների փոխարեն գերադասեց «սրիկա, մարդասպան» քոչվոր իսլամ ցեղերին եւ դժվար թե երբեւէ կարողանա իր սիրտը մտած այդ կործանարար քաղցկեղից ազատվել: Եվրոպ, մոռացա՛ր այն կուռ հարվածը, Որ պատրաստել էր Իսլամ քո որդոց, Հայը չուզաց քո արտոսը ու լացը, Քաղաքաց հրդեհ, խողխողանք մարդոց:

Երկհարյուր տարի արյուն թափելով, Դեմ տվեց ահեղ ուժգին այն գրոհին, Մինչեւ որ ձեր կյանքն դարձավ ապահով, Մինչեւ որ ուժեն ընկավ թշնամին:

Եվրոպ, մոռացա՛ր երբ քու քաջերը Անապատի մեջ մնացին քաղցած, Ինչ պիտ օգնեին նոցա զենքերը, Թե որ Հայք նոցա չը տային կուշտ հաց...

... Ինչերո՞ւս էր պետք առաքինի վարք, Էր չեղանք Հայքըս սրիկա, մարդասպան, Անշուշտ կըդասեր մեզի ազգի կարգ կրյունածարավ գովված Եվրոպան:

Արդարադատ ու ըմբոստ է Պատկանյալի քաղաքացիական քնարերգությունը, որն իր արդիական բովանդակությամբ, հայ ոգու արթնացման ու զգաստացման բացառիկ զանգահարությամբ, բանաձեւային մտածողությամբ ու բարձր արվեստով սերունդների վրա ունեցել է տեսական խոր ներգործություն ու դաստիարակչական զորեղ ազդեցություն:

Պատկանյալի արձակը

Բազմաժամր ու բազմաթեմա է Պատկանյալի ստեղծագործությունը: Մեծ էր բազմատաղանդ այդ գրողի ասելիքը, որ նա ջանում էր հայ հանրությանը հաղորդել գրական տարբեր ժանրերով: Պատանության ու երիտասարդության տարիներին որպես բանաստեղծ հանրահռչակված, մինչեւ հասուն տարիքը իր ստեղծագործական կարողությունները տարբեր ժանրաձեւերում փորձած գրողը կյանքի վերջին տասնամյակներում հանդես եկավ նաեւ արձակ ստեղծագործություններով, որոնք նույնպես մեր գրականության դասական արժեքներից են: Պատկանյալի արձակը հարուստ է գաղափարական ու գեղարվեստական հզոր լիքներ պարունակող մեծ ու փոքր գործերով: Դրանք ժանրային բաժանումով երկու հիմնական խումբ են կազմում՝ վեպեր կամ վիպակներ եւ գրական արեւելահայերենով ու Նոր Նախիջեւանի բարբառով պատմվածքներ:

Արձակ էջեր՝ զավեշտական պատկերներ, պատմվածքներ ու վեպեր Պատկանյալը հիմնականում գրել է ստեղծագործական շուրջ տասնամյա դադարից հետո՝ 1870–1880-ական թթ., Զ. Պատկանյալի հորդորով ու քաջալերությամբ:

→ էջ 6


Նախիջեւանի բարբառների համապատկերը

Սկիզբը՝ թիվ 3

Նամենատաբար ուշ է ուսումնասիրվել ճահուկ-Վայքի միջբարբառը (Վայոց ձորի շուրջ մեկ տասնյակ տեղաբնիկ գյուղեր, հյուսիսային Նախիջեւանի՝ այժմ արդեն հայաթափ երկու բնակավայր՝ Նախճավան գավառի Ազնաբերդ եւ ճահուկ գավառի Օծոփ գյուղերը): Մինչեւ 1980-ական թվականներն այս խոսվածքախմբի մասին սոսկ թռուցիկ հիշատակություններ կային բարբառագիտական գրականության մեջ, որտեղ այն համարվում էր Արարատյան բարբառի խոսվածք: Մեր հեղինակած մի շարք աշխատանքներով եւ «Վայոց ձորի միջբարբառը» մենագրությամբ պարզել ենք, որ ճահուկ-Վայքի միջբարբառը Արարատյան բարբառի խոսվածք չէ, այլ իր հատկանիշներով միջակա դիրք է գրավում Արարատյան, Ջուղայի եւ Արցախ-Սյունիքի բարբառների միջեւ: Աշխարհագրական եւ լեզվական մերձավորությունների համընկնման այս փաստն էլ հաստատում է խոսվածքի տեղաբնիկ լինելու իրողությունը:

Պարզվում է, որ շահաբասյան բռնագաղթից առաջ այս բարբառն էլ տարածման առավել ընդգրկուն սահմաններ է ունեցել, որի ապացույցներից են երեւանի մերձակայքում գտնվող Չոլմակչի գյուղում 1679 թվականի երկրաշարժից հետո ճահուկ գավառի Նորս (Նորք) գյուղից վերաբնակված եւ բնակավայրը Նորք վերանվանած հայերի խոսվածքի՝ հնչյունական, բառապաշարային եւ ձեւաբանական հատկանիշների բազմաթիվ ընդհանրությունները Յուսիսային Նախիջեւանի եւ ճահուկ գավառի տեղաբնիկ խոսվածքների հետ, ինչպես նաեւ նույն տարածքի Ղարաղուշ գյուղից եւ ճահուկ ավանից 17–18-րդ դարերում թուրքիայի Բոլու քաղաք տեղափոխված կաթոլիկ հայերի խոսվածքների հետ: Հենց այս նկատառումով նախկինում Վայոց ձորի միջբարբառն անվանված եզրույթը հետագայում վերանվանել ենք ճահուկ-Վայքի միջբարբառ:

Նախիջեւանի տարածքի վերջին չուսումնասիրված բարբառային միավորը պատմական Գողթն գավառի Ռամիս, Փառակա, Բիստ, Մեսրոպական, Ողոհի (նախկինում՝ նաեւ Խուրստ) գյուղերի՝ լեզվական բավական սերտ առնչություն ներկայացնող խոսվածքախումբն էր:



Վերջին տարիների մեր ուսումնասիրություններում պարզել ենք, որ այս խոսվածքները նույնպես դրսևորում են բարբառային հատկանիշների այնպիսի մերձավորություններ, որոնք թույլ են տալիս խոսվածքախումբը միավորել առանձին բարբառային միավորում եւ անվանել Յյուսիսային Գողթնի միջբարբառ:

Նմուշ Ազուլիսի բարբառով

Ստորեւ ներկայացվող բանաստեղծության հեղինակը 1869 թվականին Գողթն գավառի Ազուլիս ավանում ծնված, Թիֆլիսում ապրած գրող, ուսուցիչ եւ ճանաչված մտավորական Գարություն Թումանյանն է:

Հարություն Թումանյանը հեղինակել է մի շարք թատերգություններ, պոեմներ, բանաստեղծություններ, ստեղծագործել է նաեւ մայրենի՝ Ազուլիսի բարբառով, որի հնչյունական համակարգը թեւեւ մոտ է գրաբարի հնչյունական համակարգին, սակայն ունի քմային ձայնավորներ (ա՛, օ՛, ու՛) եւ քմային բաղաձայններ (գ՛, կ՛, ք՛): Բանաստեղծությունը գրվել է 1919 թվականի դեկտեմբերի 24–25-ի՝ Ազու-

լիսի մեծ ողբերգությունից ամիսներ առաջ՝ կանխազգալով բարդ եւ հակասական իրադարձություններով լի այդ ժամանակներում հայրենի եզերքի մոտալուտ կորուստը: Այն առաջին անգամ իրապարակվել է 1919 թվականին՝ «Զօկի ճրօգը» պարբերականում եւ, ցավոք, այսօր էլ առավել քան արդիական է, քանզի պատմական դաժան ճակատագրի բերումով արդեն հիմնովին հայաթափված եւ ամայացած Հայոց նվիրական Գողթն գավառի հիասքանչ մարգարիտ Ազուլիսն արդեն գրեթե մեկ դար երկու խղճուկ աղբրեջանաբնակ գյուղի է վերածված...

Ստեղծագործությունը ներկայացնում ենք բարբառային բնօրինակով եւ մեր կողմից կատարված գրական հայերեն փոխադրությամբ:

Թումանյան Հարություն ՄԻՐ ՀԵԳՈՒՂԱՊՆԶ ՎԱ՛ԹԱՆԸ

Օհի մաջին, մօհի մաջին
Միր վա՛թա՛նը լլիս ա՛ն:
Ուման չիկօ՝ քյօ՛մա՛գ՝ արի,
Սեվ խըբերը գ՛լիս ա՛ն:

Շօռ ա տըվէծ, մալլափ ծըմվէծ
Միր ըշխարքի ու՛լլու՛րը.
Հարամի՛քըն ակած լըցվէծ
Միր ազգի չուրք բու՛լլու՛րը:

Ըկընլու՛սի, մըշտըլըղի,
Թօզա կ՛անքի գ՛ա՛րունքին
Սեվ մըռօջ ա, թօխա ա ակած
Կետված Հայօց յերկընքին:

Դու՛շմունն ակած, չափմիշ նարամ,
Միր օջաղը ք՛ա՛նդա՛ն ա՛ն,
Հայի ճըրօգ՛ը իընգըցա՛նա՛ն,
Աշխարք ըրնօ՛վ նա՛րկա՛ն ա՛ն:

Միգ կ՛անք տըվուղ, միգ շունչ տըվուղ
Զօկըստունը մա՛ռնա՛ն ա՛ն,
Նժր ըք, մժր ըք, ք՛ա՛մբախտ զօկար,
Շու՛տ իըսափիք՛, մա՛ռնա՛ն ա՛ն:

Հարություն Թումանյան ՄԵՐ ՀՈԳԵՂԱՐԶ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Ահերի մեջ, մահերի մեջ
Մեր հայրենիքն է լալիս,
Չկա մեկը, որ ձեռք մեկնի,
Սեւ լուրեր են մեզ գալիս:

Շուռ է եկել, իսպառ ծովել
Մեր աշխարհի ոլորքը.
Թշմամին է եկել լցվել
Մեր ազգի չորս բոլորը:

Աջքալույսի, ավետիսի,
Նորոգ կյանքի գարունքին
Սեւ մշուշ է, թուխա է եկել
Դիգվել Հայոց երկնքին:

Ոսխն եկել, մեզ թալանում,
Մեր օջախն է ավերում,
Հայի ճրագն է հանցցում,
Հողն արյունով է ներկում:

Մեզ կյանք տվող, մեզ շունչ տվող
Չոկստանը մեռնում է,
Ո՛ր եք, ո՛ր եք դժբախտ զոկեր,
Շուտ հասեք դուք, մեռնում է:

Արտակ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

Մյունխաց ուսումնագիտական կենտրոնների ավանդը հայ մշակույթի անդամսանում (V–XII դդ.)

Սկիզբը՝ թիվ 2–3

«Մեկնութիւն ժամակարգութեան» աշխատության մեջ Ստեփանոս Սյունեցին ոչ միայն բացատրել է ծիսական պարագաների խորհուրդը, այլև պահպանել ծիսակարգի հնավանդ մաքրությունն ու ազգային նկարագիրը՝ գերծ մնալով օտարամոծություններից: Մեկնությունը հայտնի է ընդարձակ եւ համառոտ տարբերակներով: Դավանաբանական հայեցակետից ուշագրավ է Պատարագի երից սրբասացությանը («Երգ երեքսրբեմի») նվիրված Դ գլուխը, որտեղ հեղինակը հիմնավորում է «խաչեցար» ասելու՝ Դայոց Եկեղեցու տեսակետը: Ստեփանոս Սյունեցու «Մեկնութիւն ժամակարգութեան», ինչպես եւ «Ի խորհուրդ Եկեղեցոյ», «խորհուրդ եւ կարգատրութիւն Եկեղեցոյ», «Պատճառ հիմնարկութեան Սրբոյ Եկեղեցոյ» երկերը հետաքրքրական են պատարագների տեսական բովանդակության ուսումնասիրման, Եկեղեցական ճարտարապետության առանձին մասերի աստվածաբանական բացատրության, այսինքն՝ խորհրդանշանի աստվածաբանության տեսանկյունից: Նշանակալի է Ստեփանոս Սյունեցու բերած նպաստը ժամերգության կարգավորման, ժամակարգության մեկնաբանման բնագավառում: Նա տվել է նաեւ գիշերային ժամերգության խորհրդի, ինչպես նաեւ Եկեղեցու հիմնարկների բացատրությունը:


Ստեփանոս Սյունեցին ամմասն չի մնացել ժամանակի Եկեղեցաքաղաքական եւ դավանաբանական պայքարից: Այդ մասին են վկայում նրա աստվածաբանական-դավանաբանական աշխատությունները («Վասն անապականութեան մարմնոյն Քրիստոսի», «Պատասխանի թղթոյն Գերմանոսի», «Պատասխանի թղթոյն Անտիոքու եպիսկոպոսի», «Պատասխանի առ վարդապետսն Աղուանից»):

Ըստ պատմամատենագիտական վկայությունների՝ ժամերգության կանոնակարգումը, շարականային կանոնի մեջ հոգեւոր երգի գեւորումը եւս կատարել է Ստեփանոս Սյունեցին:

Նրան են վերագրվել շարականների ամբողջական շարքեր (օրինակ՝ «Մարտիրոսաց եւ մեջեցելոց»-ը), Դարության Ավագ օրհնությունները, սուրբ Խաչին նվիրված տաղեր եւ այլն, ինչպես նաեւ հիմնադր եւ պահոց սաղմոսները: Ստեփանոս Սյունեցու անվան հետ են կապվել մի շարք կարեւոր տեղաշարժեր եւ բարեփոխումներ (ուրթայն համակարգի տեսական իմաստավորում եւ բարեկարգում, կանոնի ժանրի վավերացում, խազերի կիրառման մախնական փորձեր): Դիոնիսիոս Թրակացու «Մեկնութիւն քերականին» երկասիրության մեջ Ստեփանոս Սյունեցին ի մի է բերել V–VII դդ. երաժշտական գեղագիտությանը վերաբերող՝ Դավթ Անհաղթի, Դավթ Քերականի եւ իր ուսուցիչ Մովսես Սյունեցու ձեռքբերումները՝ հարստացնելով այդ բնագավառն իր դիտարկումներով եւ դատողություններով: Աշխատության մեջ նա անդրադարձել է երաժշտական արվեստի դասակարգման, գեղագիտական կերպարի ստեղծման ձեւերի, միջոցների ու հնարանքների, զուսանական ու հոգեւոր երաժշտության փոխհարաբերության եւ այլ հարցերի:

Նշանակալի է նաեւ Ստեփանոս Սյունեցու թարգմանական ժառանգությունը: Նրա բեղուն գրչի արգասիքն են «Վարք Դիոնիսիոսի եւ լուծումն գրոց նորին», «Մատենագրութիւն Դիոնիսիոսի Արիսպագացոյ», «Կիրոյ Աղեքսանդրացոյ Գիրք Պարապմանց», «Նեմեսիոսի եպիսկոպոսի Եմեսացոյ՝ Յաղագս բնութեան մարդոյ», «Գրիգորի եպիսկոպոսի Նիսացոյ՝ Յաղագս կազմութեան մարդոյ», Գեղորդ Պիսիդեսի «Յաղագս Վեցօրեայ արարչութեան», «Տեսիլ սրբոյն Մեթոդի եպիսկոպոսի Պատարայ եւ վկայի յաղագս անցելոյն, ներկայիս եւ ապառնեացն...», Գերմանոս պատարարքի «Յաւատոյ թուղթ», Աթանաս Աղեքսանդրացու «Ճառք» եւ այլ երկերի հայերեն թարգմանությունները:

Սյունյաց մշամավոր ուսումնագիտական կենտրոններից էր Մաքենոցաց կամ Մաքենյաց վանքի դպրոցը: Մաքենյաց վանքի մասին պատմական տեղեկությունները VII դարից



են: VIII դարից Մաքենյաց վանքում գործել է վարդապետարան-դպրոց, որը մշամակալից դեր է կատարել դպրության, մամանվանդ Եկեղեցական կարգերին վերաբերող գրականության ասպարեզում. տվել է շատ բարձրաստիճան հոգեւորականներ: Այստեղ են ուսանել եւ գործել Ստեփանոս Սյունեցին (Ստեփանոս Քերթող), ինչպես նաեւ Դայոց կաթողիկոս եւ պատմիչ Դովհաննես Ե Դրասխանակերտցին (898–929 թթ.), Վահան Գողթնացին, ապագա կաթողիկոսներ Սողոմոն Ա Գառնեցին (791–792 թթ.), Մաշտոց Ա եղիվարդեցին

(897–898 թթ.): Պատմիչ Մովսես Դասխուրանցու (Կաղանկատվացի) վկայությամբ՝ վանքը մեծ համբավ է ձեռք բերել հատկապես Սողոմոն Գառնեցու վամահայրության տարիներին (760–ական թթ.): Մաքենյաց վանքի դպրոցում դասավանդել են փիլիսոփայություն, աստվածաբանություն, սաղմոսերգություն, երաժշտություն:

VIII դ. Մաքենյաց վանքի առաջնորդը եւ ուսումնագիտական կենտրոնի ուսուցչապետն էր ականավոր մանկավարժ, գիտնական եւ մատենագիր Սողոմոն Մաքենացին:

→ էջ 7

Մուշեղ Գալշոյան

← էջ 5

Ահա պատմական ու ժամանակակից հարցադրումների այս հենքի վրա էլ բացվում ու ծավալվում է Ձանգեզուրի պատկերը, եւ գրողի խոսքը ոչ թե պատմության վերաշարադրանք է, այլ կտրուկ հիշեցում՝ իմացիոն ինչպես է փրկվել ու պահպանվել այս մի բուռ հողը, եւ տեր եղիր քո երկրին: Քո տան մեջ քեզ մի զգա օտարի պես, քոչվորի առջեւ քեզ մի պահիր հյուրի նման եւ մի մտածիր, որ բան է, եթե օրերը խառնվեն, վաղը ամեն ինչ կթողնես ու կփախչես աչքդ ուր որ կտրի. երեկ՝ Միջին Ասիա, այսօր՝ Կրասնոդար ու Ստավրոպոլ, երեկ՝ Զնդկաստան, Պարսկաստան կամ Մերձավոր Արեւելք, այսօր՝ Ամերիկա, հատկապես՝ Ամերիկա, եւ եթե Ամերիկան գլուխ չէկալ, նոր միայն՝ Եվրոպա: Մարդու ստեղծած մեծագույն արժեքը հայրենիքն է, իսկ օտար երկրի տակ ապահովություն որոնելը ոչ միայն դասալքություն է, այլեւ ինքնառնչացում: Դե, քո Ձանգեզուրը թող ու գնա, դարձիր ամերիկացի, ինչո՞ւ չէ, նաե՛ւ՝ ճապոնացի: Ու թուրք-ադրբեջանցին թող գա ու տեր կանգնի քո հող ու ջրին, իսկ դու էլ հեռվից, արտասուքն աչքերիդ, քո բախտն անհիշելով, հայրենասիրական երգեր մրմնջա:

Այս հայացքը, այս տառապագին ցավը՝ ուղղված զանգեզուրյան գյուղերին ու քաղաքներին, լավը ավելի լավ տեսնելու հույսն է, իսկ որ ամենակարեւորն է՝ եղածը պահպանելու, եղածը շարունակելու հավատը:

Այս նույն հայացքն է ուղղված նաեւ Արագածի լանջերին փռված գյուղերին ու շեներին («Լուսավորչի կամքեղը»): Աշխարհի միախառնեղծ վիճակով ժառանգություն մնացած լեռ ու քար, դաշտ ու հովիտ, զբոսաշրջիկի համար գրավիչ (ինչ լեռներ են, ինչ մաքուր օդ), բայց տիրոջ համար դաժանագույն բնություն: Քարից հող մաղելով, հողի վրա նոր սեւահող լցնելով պիտի այդ աշխարհի բնակելի դարձնես, շուն՝ ու կենդանություն հաղորդես ամեն ինչի, որ դառնա հայրենիք, թե չէ դա էլ կմնա տարածություն, որը, ինչքան որ կա, լավ է, բայց այդպես լինելն էլ չլինելու է նման, այն էլ՝ ոչ լրիվ 30 000 քառակուսի կիլոմետրի պայմաններում: Ու նորից բացվում-ծավալվում է

գրողի խոսքը՝ հեռու գեղեցիկ հայրենահիացումից, բայց լցված հայրենիքի անափ ու ամուր սիրով:

Այսպես Գալշոյանի մտորումներում ու ակնարկներում էջ առ էջ բացվում է հայոց աշխարհի իրական պատկերը: Անցյալը սոսկ պատմության դաս է՝ չմոռանալու համար անցած ճանապարհը, չկորցնելու որտեղից-ուր ուղեցույց մշանը: Դարցարդումների շրջանակը լայն է, բայց հեռակետը համրապետության տնտեսական վիճակն է՝ այս մի բուռ հողի տնտեսական ամրապնդումը, շինարարությունն ու կառուցումները, նոր մշակվող հողերը, ժողովրդի համախմբումն ու բազմացումը: Ի վերջո, հենց Մ. Գալշոյանի սերնդի աչքի առաջ ժողովուրդը դուրս եկավ քսենոփոնյան ժամանակների իր խարխուլ խուղերից եւ կառուցեց երկհարկ, եռահարկ առանձնատներ: Ակնարկագիրը լավ գիտեր, որ այդ տները նրա բնակիչներին բերելու են նաեւ երկհարկ ու եռահարկ ուրախություն: Ինչո՞ւ չէ, ուրեմն սա էլ կա, եւ սրա տերն էլ պետք է լինենք:

Բազմաթիվ են Մ. Գալշոյանի ակնարկները: Դրանցով կարելի է քարտեզագրել 1960–1970-ական թթ. Դայաստանը՝ հիշելու, թե որտեղ ի՞նչ է կառուցվել, ո՞վ է կառուցել, որտեղ ի՞նչ խոպան է յուրացվել, ո՞վ է յուրացրել: Իսկ սա արդեն տարեգրություն է՝ եւ հավաստի, եւ վստահելի:

Գալշոյանի ակնարկների մեջ որոշակի ուղղվածություն ունի ժողովրդի բարոյական ու հոգեբանական դաստիարակությունը՝ հեռակետ ունենալով ազգային արժանապատվությունն ու ազգային ծրագրերի իրականացման տեսքը: Ամեն ինչի ելակետը դառնում է ճանաչումը՝ ժողովրդի պատմական անցյալի իմացությունից մինչեւ նրա նորօրյա կյանքը: Ճանաչումն է սիրելի դարձնում ունեցանք, ճանաչումն է մարդու մեջ ընդարձակում հայրենիքի սահմանները եւ այս իրական հողի վրա երազանքի ծիածան կապում առկայի ու հեռակայի, եղածի ու կորցրածի միջեւ: Սա Բաֆֆու տեսությունն էր՝ շարադրված «Կայծեր»-ում, ինչն ահա ինքնուրույնաբար շարունակում է նրա գործի հետետորդը:



«Քեզ վերելից չպետք է նայել»՝ սա ակնարկներից մեկի վերնագիրն է: «Քեզ»-ը՝ Դայաստանն է, «վերել»-ը՝ երկինքը, ինքնաթիռի բարձունքից: Այդպես վերելից նայելիս Դայաստանը մի բուռ քարակղզի է ընդամենը մի քանի թույլ թռիչքի տեսողությամբ: Դրա համար հայրենի եզերքը պետք է ճանաչել ուխտավորի պես, ոտաբորի ու ամտորոնք, հավատով ու սպասումով՝ նրա պարող ու մարած ամեն մի հիշատակին այցի գնալով: Դա այդպես է, որովհետեւ այս մեծ ու օտար, այս գեղեցիկ ու գայթակղիչ աշխարհում միակ սրբության սրբոցը հայրենիքն է: Իսկ հայրենիքի ամեն մի հիշատակի կորուստը՝ մարդու, հավաքական առումով՝ ազգի հիշատակների կորուստ է: Այս ակնարկը գրվել է 1965-ին՝ հայոց եղեռնի զոհերի ռեկոնստրուկցիոն կապակցությամբ:

Եվ նորից սրվում է բազմիցս արժարժված հարցադրումը՝ զոհն եղածը կարողանալ պահել, որովհետեւ հաջորդ սերունդները հաշիվ են պահանջելու նաեւ այսօրվանից: Այս առումով դիպուկ շեշտադրումով բաց հրապարակագրություն է «Դացը մերն է, իսկ հողը՝ չճնվածներինը» ակնարկը: Այսինքն՝ հողը հեռանում է մեր ոտքի տակից, ի՞նչ ենք ժառանգելու մեր որդիներին:

Գրողի մտահոգությունների շրջագծի մեջ աստիճանաբար ներմուծվում է հայության աստանդական բեկորների ճակատագիրը: Դայրենապահպանման ու հայրենաշենացման նույն զգացողությամբ նա մեկ խոսք է բացում օտար աշխարհներից եկած հայուհու հետ («Օրիորդ Մարի»), մեկ տիրոջ իրավունքով դիմում համրապետության ղեկավարներին եւ պահանջում տեր կանգնել Լիբանանի պատերազմին զոհ գնացող հայությանը: Ահա նրա խոսքը. «Թե ինչպիսի ոճրագործություն է կատարվում բեյրութաբնակ հայերի նկատմամբ, Ձեզ, անկասկած, ավելի է հայտնի, քան ինձ, քան ժողովրդին: <...> Այնտեղ մի անմեղ ժողովուրդ է կոտորվում... Եմիշերու սուրը նորից պատյանից դուրս է եկել... Ես իրավունք չունեմ (զույգ նաեւ դուք) պահանջելու, որ խորհրդային պետությունը զորք մտցնի Բեյրութ, պաշտպանելու Միության ժողովուրդներից մեկի մի հատվածը, բայց անարգվող ու կոտորվող իմ եղբայրների կողքին կանգնելու իրավունքը իմն է: <...> Այնտեղ իմ եղբորն են սպանում եւ ինձ իմ արյունն ու արժանապատվությունը պաշտպանելու իրավունքից զրկելը անմարդկային կլինի» («Կարեն Դեմիրճյանին»):

Մեկ այլ առիթով նա շարունակում է. «Սփյուռքը մեծ ուժ է <...>, ընդ որում Սփյուռքը այն ուժն է, որ իմ ազատությունն է ստեղծում նաեւ, կոնկրետ իմ, մի գրողի ազատությունը Սփյուռքը կարող է ստեղծել: Մեր մտավորականության մեծ մասի հեռարանը Սփյուռքում է» (*Նույն տեղում*):

Սա մշամակում է, որ, նախ, հայրենիքը պետք է կարողանա տեր կանգնել Սփյուռքի դժվարին պայմաններում գոյատևող իր գավակներին եւ, ապա, որ համաշխարհային քաղաքակրթության մեջ ներգծված Սփյուռքը նաեւ ստեղծագործական ազատության հնարավորություն է բռնատիրության պարտադրած գաղափարական կաղապարներից:

Շարունակելի

Դավիթ ԳԱՄՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՉԱՐԵԿ ԽՐԱԽՈՒՆՈՒ ՀԱՅՐԵՆԴՈՒՏՈՒՄԸ

Սփյուռքահայ գրականության էջերում իր առանձնահատուկ տեղն ունի Ջարեհ Խրախունու հարուստ ու շքեղ բանաստեղծությունը: Ինչպես իրավացիորեն նշվում է, «սփյուռքահայ գրականությունը սկսեց կազմավորվել որպես շարունակություն արենտահայ գրականության, հենց այս վերջինի տանուկ տված ազգային գոյության պայմաններում, կորցրած հող ու հայրենիք, դիմագիծ ու անձնագիր» (Գ. Սեւան, *Սփյուռքահայ գրականության պատմության ուրվագծեր (1946–1985), Երևան, 1997, էջ 135*): Սփյուռքահայ գրականության համատեքստում էլ իր զարգացումն ապրեց պոլսահայ բանաստեղծությունը՝ սկսվելով Դուլյանից, հասնելով մինչեւ 20–30-ական թվականներ (Համբարձում Զոհական, եղիշե Սկվազյան, Սյունու Նաթանյան, Մկրտիշ Համյան, Էդուարդ Սիմքեշյան, Արմենուհի Թերզյան եւ ուրիշներ): Հետպատերազմյան շրջանում Բոսֆորի ափերին «առաքկայական խորհրդանշապաշտություն» կոչվող շարժման սերկայացուցիչների շնորհիվ ձեափոխվեց սփյուռքահայ բանաստեղծության զարգացման ուրվապատկերը:

Եթե 20–40-ական թվականների արեւմտահայ գրականության միասնական հատվածի տրոհումից հետո առաջատար օջախներ էին դարձել Ֆրանսիան եւ Սիալցյալ Նահանգները, ապա 70-ական թվականներինց հետո կարելի է հաստատել, որ պոլսահայ գրական շարժման նորագույն ուժերին՝ հատկապես բանաստեղծներին, հաջողվեց Պոլիս վերադարձնել արեւմտահայ գրական կյանքի առաջատար բնագիծը՝ բանաստեղծ Ջարեհ Խրախումու եւ մյուսների ինքնատիպ ստեղծագործությունների շնորհիվ:

Պոլիսն իրեն վերադարձրեց արեւմտահայ գրականության բնահողը, սերնդին հաջողվեց կատարել թերեւ ամենից նշանակալից առաքելությունը՝ արեւմտահայ բանաստեղծությունը շարունակել այն կտիպից, որն ընդհատվել էր 10-ական թվականներից: Այդպէս արեւմտահայ երգը ընդհատում չունեցավ:

Զարեհ Խրախունին գրական առաջին փորձերը կատարել է 1943 թվականից սկսած:

Առաջին հրատարակված գործը՝ «Հաղթականը», լույս է տեսել 1948 թվականին Մխիթարյան սանուց միության «Սան» գրական ամսաթերթում: 1952–1958 թվականներին պաշտոնավարել է Եսայան վարժարանում՝ դասավանդելով փիլիսոփայություն, տրամաբանություն, հոգեբանություն եւ հայերեն: Դասավանդել է նաեւ Կենտրոնական վարժարանում, որտեղ աշխատել է նաեւ որպես տնօրենի օգնական: Այս շրջանում էլ սկսել է ծավալել գրական գործունեություն: Գրել է բազմաթիվ բանաստեղծական ժողովածուներ, հոդվածներ, ուսումնասիրություններ, գրախոսականներ, խմբագրականներ, կատարել թարգմանություններ՝ հատկապես Ֆրանսիական արդի գրականությունը: 1959 թվականից եղել է Ստամբուլում հրատարակվող «Թծ» գրական հանդեսի խմբագիրներից մեկը:

Հարեւորախումբում բանաստեղծությունների ժողովածուներից «Տոնակարգը», «Դյուցազնահանդերը», «Քար կաթիլները», «Ես եւ ուրիշներ», «Նշմարներ մյուս երեսեն» գործերն արժանացել են զանազան գրական մրցանակների:

Զարեհ Խրախունին 1989 թվականին Վազգեն Ա Հայրապետի կողմից արժանացել է «Ս. Սահակ – Ս. Մեսրոպ» շքանշանին, Համազգային «Անահիտ» գրական, ԴԲՄ-ի «Ալեք Մանուկյան» մշակութային հիմնադրամի, «Հայկաշեն Լուուկյան» եւ գրական այլ մրցանակների: Պարգևատրվել է ՀՀ «Մովսես Խորենացի», Թուրքիայի հայոց պատրիարքության և կարգի շքանշաններով:

2. Խրախուճին երեսունից ավելի գրքերի հեղինակ է: Նրա ստեղծագործությունը Հայաստանի յուրատեսակ համայնապատկեր է, որով գրողը շարունակվել է ոչ միայն ավանդույթը, այլև նվազեցավորել գրապատմական մշակութային մոր հարաբերությունը, ինչը խորքով ու բովանդակությամբ նորարարական է հայ բանաստեղծության մեջ: 2. Խրախուճու երգերում իմացական բանաստեղծական աշխարհը հակադրվում է դասական գգացական-հուզական աշխարհին: Գրողը երկխոսում է պատմության բոլոր շրջանների հետ՝


հնուց մինչև մեր օրերը: Զ. Խրախունու սուր տեսողության առջևով անցնում են Արտաշես արքան, Պոմպեոսը, Տերյանը, Ֆիարոնյանը, Մանթաշյանը, Թուսնյանը, Թեքեյանը, Վառժանը, Սիսաք Մանուկյանը, Զահրատը, Պ. Սեւակը, Ե. Զարեմը եւ ուրիշներ:

2. Խրախուճում լավագույն ժողովածուներից մեկն «Ազատերգություն»-ն է: Այն բաղկացած է չորս բաժնից՝ «Ազատություն», «Պատմություն», «Տեսարան» եւ «Իսկ ես...»:

Տարիներ շարունակ գրողը պատմության հորքում փնտրել է ոգու եւ պայքարի հա-
րատելության արմատները: Զարմանալի
լավատեսությամբ սպասել է ազատության
հայտնությանը: Լինելով հայրենիքից հեռու՝
բանաստեղծը կանխազգուս էր ազգային
շարժման նորոգման փուլը եւ իր եղբերով,
ըստ էության, մաեւ մախապատրաստում այն:

«Ազատությունը» նկարագրում է ազգային պետականության ստեղծումը՝ անդրադառնալով բոլոր մրանց, ովքեր կռվեցին իրենց երկրի ազատության համար՝ դաժնալուծ ազատության մունետիկները: Քանաստիքը չի մասնավորեցնում իր ժողովրդին բաժին հասնող չարի ու խեղճության բախումը, այսինքն՝ Օսմանյան կայսրությունն ու հայ ժողովրդին բաժին հասած տառապանքները: Անձնակալը հոմանիշ դարձնելով ազգայինի՝ խրախուճին հյուսումն է ազատության երգեր ել կերտում ազատության նվիրյալների անանուն կերպարներ: Վերջիններիս արյան գնով ձեռք բերված ազատությունը թանկ է: Պետք է ծառեր տնկել, այգիներ տարածել, ծաղկեցնել երկիրը, որի առուններով բաժանակին ջրի փոխարեն արյուն է հոսել:

Երկրորդ շարքում («Պատմություն») հայոց պատմության հավաքական ներկայացումն է. տառապանքի փիլիսոփայությունը, որը տանում է դեպի ազատության: Պատմական որոշակի որվագների վերլուծությամբ բանաստեղծն անդրադարձ է կատարում ներկային՝ 20-րդ դարի ողջ պատմությունը դիտարկելով որպես գոյամարտ: Պատմության մեջ իր տեղը նվաճում է այն ժողովուրդը, որը մկրիստոնսոսական գաղափարներով է քայլում, որը մարտնչում է



իր ներկայի, գալիքի համար՝ ամուր կառչած
անցյալի ավանդներին ու ձեռքբերումներին:

«Պատմություն» եւ նրան հաջորդող «Տեսա-
րան» շարքերը ժամանակի գնահատության,
գեղարվեստական խոր ընդհանրացումներ
ունեն: Բանաստեղծը կամրջում է ժամանա-
կը, ներառելով տասնամյակներից եկող դառը
փորձը՝ պատմական տարրերը քննում յուրա-
հատուկ մոտեցմամբ: Ազգային հարցադրում-
ները քննելիս բանաստեղծը հեռու է մնում
սնապարծ գայթակղությունից, եսի հակադ-
րումից: Նրա համար առավել կենսական է
առարկայական հայրենիքի հեռանկարը, որի
խորհուրդը ամեն կերպ ջանում է ազատել հե-
քիադր:

→ ٤٩ ٨

ՌԱՓԱՅԵԼ ՊԱՏԿԱՆՑԱՆ (1830–1892)



← էջ 4

Վերջինիս Նոր Նախիջեւանի բարբառով գրված այդ երկերն անհրաժեշտ էին լեզվաբանական-բարբառագիտական ուսումնասիրությունների համար, իսկ հեղինակն էլ ծննդավայրի մարդկանց՝ իր աչքի առաջ անհետացող մայրիկի լեզուն, վարքուբարքը, կենցաղը, սովորույթները, ծխախոտերը ամենակոկ ժամանակի երախից փրկելու համար հանձն է առել այդ տքնությունը եւ կերտել Նորնախիջեւանցիների կենդանի ու գունդ ամմոռաց կերպարներ, որոնց ցուցադրել է «ինչպես Աստված նախչվածացուն ստղծել էր իր համայնությունը»։ Գրական կերպարներն այնքան ճշգրիտ էին համապատասխանում

իրենց երգիծված կենդանի մախատիպերին, որ հեղինակը, հնարավոր վրեժխնդրությամբ երկյուղելով, հորեղբորորդուն խնդրում էր կամ դրանք իր ամուսնով չհրատարակել, կամ վերնագրից հետո մշել, թե իբր դրանք թարգմանություն են ռուսերենից եւ հարմարեցված հայ կամսքին:

Սակայն Պատկանյանի նորոգիչներն այս պատմվածքներում ու երգիծական բանաստեղծություններում դրանք այնքան էին իրական ու ճշմարտացի, որ նախաստիպերը գեղարվեստական երկում անմիջապես ճանաչվում էին իրենց: Բայց դրանք նաև բարձր էին որպես գրական արժեքներ, որոնց մեջ միայնաց չէին հակասում միավորված կյանքի ճշմարտությունը եւ գեղարվեստի ճշմարտությունը:

Ականավոր գրականագետ Յարություն Սուրխաթյանը, որ ծագումով Ղրիմից էր ու ծանոթ Պատկանյանի պատկերած միջավայրին ու կերպավորած տիպերին, ամստեղի չի գրել. «Պատկանյանի տաղանդի ամենամեծ արտահայտությունը՝ Նոր Նախիջևանի բարբառով նրա գրած պատմականծրերի եւ երգիծական ոտանավորների մեջ է: Այստեղ նրա գրչի արտահայտությունը հասել է գեղարվեստական կատարելության: Քաղքենիական կենցաղի, արդյական դասի նկարագիրը տվել է փայլուն զգեստով, երբեմն ծաղրով, սուր երգիծանքով, երբեմն մեղմ հումորով» (Սուրխաթյան Յ., *Հայ գրականությունը, Արեւելահայ. XIX դար եւ XX դ. առաջին քառորդը, եր., 1926, էջ 288*):

Պատմվածքները

Պատկանյաճի՝ գրական արելեւահայերե-
նով պատմվածքները քանակով քիչ են Նոր
Նախիջեւանի բարբառով գրվածների համե-
մատությամբ, թեև գրողն ունեցել է համայն
հայությանը հետաքրքրող կենսական նյութը
նույնպես գրական արելեւահայերենով շա-
րադրելու գայթակղություն: Բայց այդ դեպում
պատմվածքները կկրկնվեին բարբառի համ-
ն ու բույր, արտահայտչական հմայքն ու հարս-

տությունը, թե հեղինակ-պատմողի եւ թե կերպավորված մյուս հերոսների խոսքը կզրկվեր ռճական անհատականացման բնական զուներանգներից: Այդ պարագայում նրանք չէին տարբերվի հեղինակի՝ գրական արեւելասիայերենով գրված մյուս պատմվածքներից, որոնք լայն ընթերցողին մատչելի դարձնելու նպատակով գրական հայերենի է վերածել գրականագետ Արամ Ինճիկյանը:

«Մոմթեն մինչև վեր», «Թոմաս Բոցարիս», «Մեր տեղի ծակաբույները» ամենից արժեքավորներն են Պատկանյանի՝ արեւելահայերենով պատմվածքների մեջ. նրանցում արծարծված են նույն գաղափարական ու գեղագիտական հարցադրումները, ինչ հեղինակի արձակ ու չափափո մյուս երկերում:

«Թոմաս Բոցարիս», օրինակ, իրականացումն է «Գամառ-Քաթիպա» ընկերության շրջանի գեղագիտական այն ծրագրի, որով հայ երիտասարդությանը պալանդակային խել-ժողովուրդի, ստրկական հնագույնությունից ձերբազատելու, նրան չար ուժերի դեմ պայքարելու կորով մերձեցնելու համար անհրաժեշտ էր համարվում պատկերել բացառիկ կարողություններով օժտված անձնկեր հերոսներ. դրանցից մեկն է թուրք բռնատիրության դեմ իր հարազատների կյանքը փրկելու ճանապարհին հերոսաբար մահատակված հույն Թոմաս Բոցարիսը, որի Բաջուրյան ու անձնագրողական օրինակը պետք էր նոր ժամանակների հայ երիտասարդությանը:

«Մոճքեն մինչև վեր» գրվածքը վերաբերում է բացառապես հոգեւորական ոլորտին. ի բնէ անհավատալի ծոյլ ու չարամիտ, տգետ, իր անպատեմի չարութեաններով հայտնի Սիմասը, որ մանկութեան օրերից մախապատ ճանաչված էր որպէս որբէն լավ բանի անընդունակ, անուղղելի գող ու ավագակ, իր կնքահոր հովանավորութեամբ մախ դառնում է հոգեւոր ցածրաստիճան սպասավոր՝ մոճք, ապա վարից վեր աստիճանակարգով կաշառք տալով բարձրաճան, հասնում է իրեն ոչ արժանի մեն պաշտոններին: Ու վտանգ կար, որ բազմի

հարստամալու անհագ տենչից՝ ուրիշ ոչ մի արժանիք չունեցող այս «հայ Չիչիկովը» (Ռուս մեծ գրող Ն. Կ. Գոգոլի «Մեռած հոգիներ» եւ «Վերաքննիչ» երկերի հերոսների օրինակով կերպավորվել են Պատմապայմանի շատ հերոսներ: Նա գրել է նաեւ «Հայ Չիչիկով» վերնագրով փոքրածավալ մի պատմվածք՝ ցույց տալով գոգոլյան տիպերի եւ նրանց հայ տարատեսակների հարազատությունը), որ արդեն եպիսկոպոս էր ձեռնադրվել, որ իրագործեր «Թաղապետի, Բարդուղիմեոսի եւ Գրիգոր Լուսավորչի գահին բազմելու» իր ցնորական ախորժակը՝ ավելի վեր բարձրանալով ղեկավարեր ոչ թե մի ծուխ կամ եկեղեցի, այլ տասնյակ գավառներ ու քաղաքներ, հարյուրավոր եկեղեցիներ ու դպրոցներ, ըստ իր կամքի ու հաճույքի տնօրինել ողջ քրիստոնյա ժողովուրդի ապագայի հույսը:

Երեւոյթի հասարակական վտանգավորության գիտակցումով է Պատկանյանը կերպավորել «մոնթեն մինչէ վեր» բարձրացած Մինասին, նրան արժանացրել խստագույն ծաղրունձանակի ու դաժան ընմադատության։ Նա համոզված է, որ մեր ազգային դժբախտությունների հիմնապատճառը տեր միմասներն են։ Նրանք են, որ մեր ազգային հզորագր 31/2 խղճով ժողովրդի դարձուցին։ Եթէ չզբոքեմերը են բողոքը քանդեցին հայի ժամերի է, տների պատերը, տեր Մինասները հիմնահատակ արին 3այաստանի բոլոր տաճարները, թագավորական գահույթը են անհամար մարդոց բարեկեցութիւնը։ 3իշենք միայն տեր-Կիրակոսին ու Նիկոլ հայր տալիքին»։

Խորհրդապաշտպան Է Երկի ընդհանրացնող ավարտը՝ նորընտիր Ամենայն հայոց կաթողիկոսին ուղղված հեղինակ-պատմողի «փոքրիկ» խնդրանքով. «Վեհափառ տեր, ազատե՛ ազգս տեր Մինամաներե, եւ քու անունը օրինա՛ծ, զոված ու փառաբանած կլինի» (3, 272):

Շարունակելի

Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Կրակի խորհրդապատկերը Մուշեղ Իշխանի «Կրակը» ժողովածուում

← էջ 3

«Կրակը» ժողովածուում առանցքային նշանակություն ունեցող այս բանաստեղծությունը լեզվական-կառուցվածքային զարգացման առումով սկսվում է իր հոգում ամփոփական դիմումով (Յետաքրքրական է, որ ժողովածուում ամփոփող «Կրակը» վերնագրված բանաստեղծությունը նույնպես դիմումային ձև ունի: Յետինակը կրկին դիմում է հոգում, սակայն այս անգամ ոչ թե սկզբում, այլ վերջնամասում՝ կարծես կարեւորելով հոգեկան զգացումները), եւ ողջ բանաստեղծությունը կառուցվում է իբրեւ այդ դիմումի զարգացում (Այստեղ Մ. Իշխանը, ինչպես շատ հայ բանաստեղծներ, կիրառում է հին հունական Օրֆիկյան հիմքերի ձևը: Յիմնային պոեզիայում հիմքը, որն ուղղված է որեւէ աստվածության, սկսվում է դիմումով տվյալ աստվածությանը: Ինչպես այդ պոեզիայում, Իշխանի բանաստեղծության կառուցվածքում եւս երկի սկիզբը «մուտք» կամ «նախերգանք» է: Ինչպես քայլերգը՝ որպես երաժշտական ժանր, այնպես էլ Իշխանի երկը, ունեն եռամաս կառուցվածք: Գիտակցաբար է արված թե ենթագիտակցորեն, միանշանակորեն չենք կարող պնդել): Այսինքն՝ «Քայլերգ մահուան» բանաստեղծությունը գրված է իբրեւ հիմնային պոեզիայի համամանություն (անալոգիա):

Երկրորդ մասից սկսած՝ բանաստեղծությունը դառնում է ապրածի եւ չապրածի, փափառած թաքուն երազների, «թաղված գանձերի», մորմոքող կարոտների հաշվեհարդար, ինքնավերլուծություն-ինքնախոստովանություն

տվածի եւ ստացածի, գտածի եւ կորցրածի (այս հատվածը ռեմինիսցենցիա է Վ. Թեքեյանի «Հաշվեհարդար» բանաստեղծությունից)։

*Բն ռւմինը արդ, ինչ մնաց.—
Լոկ հոգնություն անսահման,
Դատարկություն միգամած՝
Ցամբած ծովու մը նըման* (էջ 82):

Յույսն ու սերը եւ դրանց չիրականանալը ծնում են հիասթափություն՝ հետաքրքիր փոփոխության ենթարկելով այդ հոգեվիճակներն արտահայտող նշանները: Յոգեբանական այս անցումները, հոգեվիճակների փոփոխություններն արտահայտելու համար Իշխանը կիրառում է կրակի փոխակերպման գործառույթը. արյունը դառնում է վերք, կրակը՝ մոխիր: «Լայնցավ լուսե կուրծքիդ տակ. // Օրերուն վերքը թունոտե // Եվ մոր մոխիր, մոր գարշանք // Բերավ ամեն մեկ կարոտ...» (էջ 82) արտահայտությունները, որոնք կապված են կրակի հետ, ներքին զուգորդություններով կապվում են հույսի եւ հուսալքության տրամադրությունների հետ:

Երկրային աշխարհից իր խենթ հոգուն «մահվան անմահ հանգստի» մեկնելու կոչ անող հերոսն ուզում է հեռանալ ոչ թե այս աշխարհի դուռը փակելով, այլ այն աշխարհի գաղտնիքները բացահայտող դռները բանալով: «Բացվեցեք լայն, դարպասներ // Անծանոթ մոգական» (էջ 85) տողերն արտահայտում են այն աշխարհում թաքնված կյանքի խորհուրդը որոնելու, ըմբռնելու բանաստեղծի ձգտումը:



Հարկ է նշել, որ Իշխանի բանաստեղծական աշխարհը միայն տրանսցենդենտալիզմով չի սահմանափակվում, որովհետեւ հաճախ նույն բանաստեղծությունն արտահայտում է նաեւ նրա աշխարհիացումն ու անսահման բերկրանքը կյանքի նկատմամբ (Մ. Իշխանի կենսասիրությունն արտահայտված է նրա ողջ պոեզիայում, սակայն «Ողջոյն, քեզ, կենաք» բանաստեղծական շարքի (1958 թ.) խորագիրն այդ կենսասիրության առանցքային գաղափարների ձեւակերպումը կարելի է համարել: Կյանքի նկատմամբ սերը նկատելի է նաեւ «Մեռնիլը որքան դժվար է» դրամայի

հերոս Սամի խոսքում. «Հասկցա. Երջանիկ օրերուդ հիշատակն է քեզ քաշողը: Իմ խելքս ալ իոն է դեռ, վարը: Ինչքան ալ զանգատինք, ընդունե, որ հաճելի բաներ շատ կային երկրի վրա...» (Մուշեղ Իշխան, Երկեր, Երեւան, 1990, էջ 450):

«Կրակը» ժողովածուի շատ բանաստեղծություններ գրված են կյանքի փառաբանության եւ օրհներգության շնչով: Գրականագետ Մ. Թեղեղյանը նկատում է. «Հակադրաբար կենքի ունայնութեան, յոռետեսական աշխարհահայեացքին, Իշխան կը հաւատայ կենքը տրուած ձեւով ապրելու վայելքին: Կ'ընդունի զայն, իր բոլոր ցաւերով ու տառապանքներով, սուտով ու կեղծիքով, արցունքով եւ ժպիտով: Կ'ողջունե զայն՝ թեւաբաց, իբրեւ իրական միակ ուժը, որ մարդուն տրուած է իբրեւ ստեղծագործ տառապանք, ներշնչման աղբիւր եւ ակ' վայելքի: Կը գրկե զայն «կաթոգին սիրով», որովհետեւ անով կը զգայ թէ կայ ինք, կ'ապրի ու կը շնչէ» (Մինաս Թեղեղյան, «Ողջոյն, քեզ, կենաք» Մուշեղ Իշխանի, Այգ, Բեյրութ, 7.05.1958): Այդ փառաբանությունն էլ հանգեցնում է մարդ արարածի աստվածացման: Եվ եթե ընդհանրացնելու լինենք այս թեման, պետք է ասենք, որ Իշխանը կյանքի եւ մահվան հավերժական առեղծվածը լուծում է ոչ այլ կերպ, քան կյանքի օրհներգությամբ:

Շարունակելի

Մարինե ՂԱԶԱՐՅԱՆ
ԵՊՀ հայ մորազույն գրականության
ամբիոնի դասախոս

Սյունյաց ուսումնագիտական կենտրոնների ավանդը հայ մշակույթի անդաստանում (V–XII դդ.)

← էջ 5

Նա ստացել էր իր ժամանակի փայլուն կրթություն: Սողոմոն Մաքենացին աղբյուրներում հիշվում է «Հրաշալի այր», «Հայաստանեայցն պարծանք» պատվանուններով: Մաքենացու առաջնորդության տարիներին հռչակվել է իր իսկ հիմնած եւ մոտ մեկ դար գործած Սյունիքի այս ուսումնագիտական կենտրոնը՝ դառնալով Գեղարքունիք գավառի ամենամշակվող կրոնամշակութային կենտրոնը: Ուսուցչապետ Սողոմոն Մաքենացին մասնակցել է 726 թ. Մամազկերտի եկեղեցական ժողովին, իսկ 740 թ.՝ Աղվանից Միքայել կաթողիկոսի հրավիրած Շամբորի ժողովին եւ գործուն մասնակցություն ունեցել Վրաց կաթողիկոսին ուղղված նախատինքի թղթի կազմմանը:

Հակառակ «Հարանց հայր» Սողոմոն Մաքենացու վայելած մեծ հեղինակության, եկեղեցաքաղաքական, մշակութային կյանքին բերած նպաստի՝ շատ քիչ բան է հայտնի նրա մատենագրական գործունեությունից: Մեզ են հասել սոսկ առանձին նշխարներ նրա աստվածաբանական ժառանգությունից: Այսպես՝ «Մեծի գիտնականի տեառն հալը Սողոմոնի Մաքենացաց առաջնորդի ընդդեմ Քաղկեդոնի» խորագրով դավանաբանական մեկ երկուն, որը մեզ հասել է միակ ձեռագրով, խոսվում է երից սրբասացության մասին, վարդապետորեն հիմնավորվում է Հայոց եկեղեցու դիրքորոշումը: Այս երկը, սակայն, ամբողջական չէ: Մոտ 747 թ. Սողոմոն Մաքենացին կազմել է տերունական տոների լուսաբանիչը եւ նահատակների հիշատակարանը՝ «Տոնական» ծիսական ժողովածուն, որի համար ժամանակակիցները նրան շնորհել են «Հարանց հայր» պատվանունը: Մաքենացին խմբագրել է *Մեսրոպ Մաշտոցին* նվիրված «Փոքր Կորյուն» պատմագիրքը, սուրբ *Վահան Գողթնացու* վարքի երկրորդ տարբերակը:

VIII դ. 40-ական թթ. Մաքենյաց վանքի *միաբանության* անդամների շրջանում առաջացած անհամաձայնությունների պատճառով Սողոմոն Մաքենացին իր համակիրների հետ տեղափոխվել եւ հաստատվել է Զրեակ կղզված վանքում (ենթադրաբար՝ Զավախքում), որտեղ հիմնել է նոր միաբանություն: Սողոմոն Մաքենացին մահացել է Զրեակում, ինտագայում միաբանության անդամներն աճյունը տեղափոխել են Մաքենիս:


Նշված ժամանակաշրջանում Սյունիքի մշակավոր ուսումնագիտական կենտրոններից էր Տաթևի վարդապետարանը: Տաթևի

ուսումնագիտական կենտրոնի գործունեության սկիզբն ընդունված է համարել IX դ. վերջին քառորդը, երբ Սյունյաց իշխանանիստ Շաղատ գյուղաքաղաքից Տաթևի վանք է տեղափոխվել Սյունյաց վարդապետարանը: Պատմիչ Օրբելյանը Տաթևի ուսումնագիտական կենտրոնը բնորոշել է որպես «առաջին՝ գրված ամենեցունց վանքից եւ աղբիւր շնորհաբաշխութեան տանն Սիսական...»:

Տաթևի ուսումնագիտական կենտրոնն ունեցել է զարգացման երկու կարեւոր շրջափուլ՝ 1. վարդապետարանական, 2. համալսարանական: Վարդապետարանական շրջափուլն ընդգրկում է X դ. մինչև XIV դ. վերջին քառորդը, իսկ համալսարանականը՝ XIV դ. վերջին քառորդից (մոտ 1390 թ.) մինչև 1435 թ.: Տաթևի ուսումնագիտական կենտրոնը հռչակված է եղել դեռեւս վարդապետարանական շրջանում, հատկապես՝ XI–XII դդ.: Այդ հռչակը վարդապետարանը վայելել է դասավանդողների ունեցած մեծ հեղինակության եւ ուսուցանվող գիտությունների խորության ու բազմակողմանիության շնորհիվ: Ուսումնագիտական կենտրոնն ունեցել է համահայկական մշակութային եւ հարգ, ինչպես, ըստ արժանավույն, մեծարել է Ստեփանոս Օրբելյանը. «...արար ցանկալի հեռաւորաց եւ մերձաւորաց բոլոր Հայաստան աշխարհի. եւ ջահաւորեալ իբրեւ զարեգակն ի մէջ աստեղաց՝ երեւել էր ի մէջ ամենայնի ոչ միայն շինուածովք, այլեւ պայծառամայր քահանայական եւ կրօնաւորական դասուք ի չափ եճ. եղբարց. լի էր եւ ծովամատոյց փիլիսոփայիք եւ երաժշտական երգովք. ճոխ էր եւ վարժարան դպրոցանք վարդապետական կրթութեամբ: Նաեւ արուեստաւորք նկարչացն եւ գրողաց՝ անհամեմատը...»:

Տաթևի ուսումնագիտական կենտրոնի փառքն ու հեղինակությունը պահպանվեցին մինչև XII դ. կեսերը, երբ կենտրոնի խնամակալությունն ստանձնել էր Սյունյաց մետրոպոլիտ Յովհաննես եպիսկոպոսը, որը վարդապետարանը «զարդարել» էր ոչ միայն սպասքով, աստվածային կարգերով ու կրոնավորներով, այլեւ անհաղթ փիլիսոփաներով, անմման երաժիշտներով եւ բանիբուն վարդապետներով ու աստվածագագաց ճգնավորներով, նաեւ հոգնապատիկ արհեստավորներով:

Յետագայում Տաթևի վանքը մի քանի անգամ հարձակումների է ենթարկվել, ավերվել ու վերաշինվել: XIII դ. վանքի խնամակալությունն ստանձնել են Լիպարիտ Օրբելյանի որդիներ Սմբատ եւ Տարսայիճ իշխանները:



Սակայն շուտով Տաթևի ուսումնագիտական կենտրոնն իր տեղը զիջել է Գլաձորի համալսարանին, որը կարճ ժամանակ անց դարձել է համահայաստանյան ամենախոշոր եւ հեղինակավոր կրթօջախը: Գլաձորի համալսարանի փակվելուց հետո ուսուցչապետ Յովհան Որոտնեցին տեղափոխվել է Որոտնավանք, հիմնել դպրոց, ապա հաստատվել Տաթևի վանքում եւ վերակառուցելով Տաթևի կրթարան-վարդապետարանը՝ հիմնադրել մոր՝ բարձրագույն դպրոց՝ համալսարան: Տաթևի համալսարանում մեծ գործել ժամանակի գիտուն ու բանիմաց շատ վարդապետներ, մոտ 500 կրոնավոր, իմաստասերներ, աստվածաբաններ, երաժիշտներ, մատենագիրներ, մանրանկարիչներ եւ այլն, ավելի ուշ՝ 1000 միաբան: Յովհան Որոտնեցին իրեն փոխարինող էր Տաթևի համալսարանի ուսուցչապետ է կարգել (1386 թ.) իր աշակերտ Գրիգոր Տաթևացուն: Նրա ուսուցչապետության շրջանում Տաթևի համալսարանը ծաղկման մոր շրջան է ապրել եւ դարձել գիտության, մշակույթի, արվեստի, հոգեւոր կյանքի համահայկական հռչակավոր կենտրոն, Հայոց եկեղեցու ուղղափառ դավանության եւ ավանդների պաշտպանության հզոր ամրոց:

Այսպիսով՝ Սյունիքի մշակավոր ուսումնագիտական կենտրոնները (Շաղատ, Մաքենյաց կամ Մաքենացաց վանք, Տաթև եւ այլն) եւ ուսուցչապետները (Ստեփանոս Սյունեցի

Առաջին, Պետրոս Սյունեցի, Մաթուսաղա, Մովսես Քերթոզ, Ստեփանոս Սյունեցի (Ստեփանոս Քերթոզ, Երկրորդ), Սողոմոն Մաքենացի) մշակավոր ներդրում են ունեցել V–XII դդ. Հայաստանի հոգեւոր-մշակութային կյանքում՝ նպաստելով հայալեզու դպրության, գիտության, մատենագրության, թարգմանական գրականության զարգացմանը եւ ազգային ինքնության ու ավանդույթների պահպանմանը:

Միջնադարյան Սյունիքի ուսումնագիտական կենտրոններն ու ուսուցչապետների բույլը հայ մշակույթի, մասնավորապես՝ մանկավարժության պատմության մեջ անուրանալի պատվավոր տեղ ունեն ոչ միայն տարատեսակ գիտակարգերի ներդրման, զարգացման, դասավանդման, այլեւ մատենագրական երկերի ստեղծման, ընդօրինակման եւ պատկերազարդման առումով: Սյունիքը տվել է հայկական մշակույթի մեծաթիվ մշակավոր ներկայացուցիչներ, որոնք լուրջ ներդրում են ունեցել միջնադարյան հայկական մշակույթի զարգացման գործում: Բավական է նշել, որ հենց Սյունիքում են ծնունդ առել ու մեծահռչակ դարձել միջնադարյան Հայաստանի կրթամշակութային կյանքի երկու փառահեղ, անգերազանցելի ուսումնագիտական կենտրոնները՝ Գլաձորի եւ Տաթևի համալսարանները:

Արման ՄԱՆՈՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

$$S\bar{U}U\bar{U}S$$

Ինչո՞ւն վերականգնավորել բանակը

Նայաստանի դժբախտությունները միշտ էլ պայմանավորված են եղել նրանով, որ մարդիկ պաշտոններ են զբաղեցրել հովանավորչության սկզբունքով, քանի որ «վերելների» խմբավորումներն այդպես են ցանկացել: Իսկ հաջողությունները միայնամակ եղել են այն դեպքերում, երբ այդ հակապետական «կանոնը» ամենավել է: Ինչպես օրինակ, երբ Մյասնիկյանը երկրի էր հրավիրում հայտնի մասնագետներին՝ Թամանյանին, Իսահակյանին, Սարյանին եւ մյուսներին, կամ երբ որպես Գիտությունների ակադեմիայի նախագահ հրավիրվեց Դ. Օրբելին, ապա՝ Ղամբարծույանը: Դենց նման մոտեցումից էլ սկիզբ առան Հայաստանի հաջողությունները:

Այժմ հարց է, թե ներկա պայմաններում ինչպես կարելի է լավագույնս բարձրացնել մեր բանակի մարտունակությունը, եթե բոլոր զինվորական պաշտոններն զբաղեցրել են վերոհիշյալ սկզբունքով ընտրված մարդիկ: Նշանակում է, որ պետք է կասկածի տակ դրվի բոլոր բարձրագույն զինվորական պաշտոններ զբաղեցնողների պրոֆեսիոնալիզմը: Նշանակում է, որ ռազմական այդ պաշտոնյաները չեն կարող ինքնին բարձրագույն ռազմական ղեկավարություն ձեռավորել, հետեաբար՝ երկրի, պետության պաշտպանությունը վտանգված է: Ի՞նչ անել:

Այս հարցին պատասխանելու համար նախ փորձենք տեսնել, թե ինչ է կատարվում գիտության ոլորտում:

Հայաստանը բնականաբար պետք է տա-
նուկ տար պատերազմը, որովհետև գի-
տությունը պատերազմում ներգրավված
չէր: Ներգրավված չէր այն պատճառով, որ
գիտության մեջ եւս քառասուն տարի բո-
լոր պաշտոնները բաշխվել են հանցավոր
սկզբունքով: Գիտական ոչ պատշաճ մա-
կարդակ ունեցող մարդիկ դառնում էին
Ակադեմիայի նախագահներ, իսկ գիտա-
կան մյուս պաշտոնները բաշխվում էին՝
եւելելով դեկավար կազմի հարազատների
կամ իրենց շրջապատի սոցիալական դիր-
քան: Նման վայ-պաշտոնյաները ոչ միայն
ոչինչ չեն արել, այլ նույնիսկ չեն հաղո-
րել ոլորտով զբաղվող գիտնականներին,
թե պատերազմի դեպքում ինչ կարող են
տալ երկրին: Եվ դա այն ժամանակ, երբ
գիտության մեջ կարելի էր կարգուկանոն
հաստատել շատ պարզ եղանակով (տես
«Գիտության եւ կրթության զարգացման
տեսլականը (հայեցակարգ)» հոդվածը



(ամբողջական տարբերակ), 2021: <https://www.lragir.am/2021/01/18/614883/>);

Բանն այն է, որ հեշտ է պարզել, թե ով-ով է գիտության մեջ: Գիտնականների տվյալները հայտնի են, եւ պետք է հետեւել, որ դրանք լինեն համացանցում: Այդ տվյալների հիման վրա կարելի էր կազմել գիտնականների վարկանիշները եւ համապատասխանաբար բաշխել հիմնական պաշտոնները: Ի դեպ, նույնիսկ պետք չէ ամհանգստացնել ամբողջ գիտական հանրությանը, քանի որ շատ չեն այն գիտնականները, որոնք ակնհայտ համապատասխան տվյալներ ունեն: Այնպես որ՝ ունենալով այդ տվյալները՝ կարելի էր վստահորեն համալրել հիմնական պաշտոնները գիտության մեջ: Իսկ ցանկացած գործի հաջողությունը 99 տոկոսով ապահովում են ճիշտ ընտրված կարգերը: Ահա այսպես հասկանալի են հեշտ կարելի էր չտրել ռազմագիտության ոլորտը եւ այն գործի դնել պատերազմում:

Հիմա փորձենք զուգահեռներ անցկացնել գիտության եւ ռազմական գործի միջեւ։
Գիտությունը։ Ինչպես ասացինք, գիտնականների տվյալները հայտնի են, նրանց կարող են հեշտությամբ գտնել եւ ըստ տեղին մշակակել համապատասխան պաշտոններում։

Կարճ ասած՝ անհրաժեշտ է ստեղծել կադրային սանդղակ: Դրա համար անհ-

րաժեշտ են կադրերի տվյալները, եւ ըստ այդմ՝ ընդամենը ստեղծել կադրերի ընտրության համակարգ:

Այժմ դիտարկենք իրավիճակը ռազմական գործում:

Զինվորականների մասին տվյալները, ի տարբերություն գիտնականների, հայտնի են միայն նախկին բարձրաստիճան պաշտոնյաներին:

Այստեղից հետեւում է, որ բարձրաստիճան գինվորականների ընտրության գործընթացում պետք է ներգրավվեն ռազմական հարցերին առնչվող մասիկին բանիմաց բարձրաստիճան պաշտոնյաները:

Սակայն, քանի որ իշխանությունները միշտ էլ զինվորական պաշտոնների են նշանակել մարդկանց՝ ելնելով իրենց անճնական ու քաղաքական հավակնություններից, այդ իսկ պատճառով էլ դժվար է սպասել, որ նախկին բարձրաստիճան պաշտոնյաները կարող են օբյեկտիվ վերլուծություն կատարել: Ամենայն հավանականությամբ, կլինեն մի քանի կարծիքներ, հնարավոր է՝ միմյանց հակասող:

Հիմնվորական կադրերի ընտրության գործընթացում որոշիչ դեր պետք է ունենա մեկ այլ մարմին, անվանենք այն բարձրագույն զինվորական խորհուրդ, որն ակնհայտորեն պետք է կազմված լինի ռազմական գործի մասնագետներից, որոնք ընդգրկված չեն կուսակցական կամ ապագա պաշ-

տոնանվարության անվանացուցակում: Եվ բարձրաստիճան պաշտոնյաները պետք է ռազմական կադրերի մասին իրենց վերլուծությունները ներկայացնեն հենց այդ մարմնին, որը կազմված պետք է լինի Նո-րատ Տեր-Գրիգորյանի, Կոմանդոսի եւ մե-ծամուն այլ հայերի մեծ մարդկանցով, որոնք ունեն պրոֆեսիոնալ զինվորական-ների հաստատված վարկանիշ:

Այստեղ պետք է ավելացնել այն, ինչի մասին մենք բազում անգամ գրել ենք: Ցանկացած մարդ, ում բարձր պաշտոնի են ներկայացնում, նա պարտավոր է ներկայացնել համապատասխան ռուրտի զարգացման իր տեսլականը, մի տեսլական, որտեղ հստակ առանձնանում են հիմնական խնդիրները, կարդային, ֆինանսական հարցերը, պատասխանատվության համակարգը եւ այլն:

3ակիրճ կրկնենք մեր առաջարկը:
1. Բարձրագույն զինվորական պաշտոնների բոլոր հավակնորդները պետք է ներկայացնեն իրենց տեսլականը:

2. Ռազմական հարցերի հետ կապ ունեցող բոլոր նախկին բարձրաստիճան պաշտոնյաներն իրենց տեսակետներն են ներկայացնում թեկնածուներից յուրաքանչյուրի վերաբերյալ:

3. Այդ տեսականների եւ վերլուծությունների հիման վրա բարձրագույն զինվորական խորհուրդը տալիս է իր եզրակացությունը՝ հավակնորդների որոշակի պաշտոնների նշանակման վերաբերյալ:

Պետք է ճշել, որ սույն առաջարկը կարելի է կիրառել այլ ոլորտների՝ կառավարման, գիտության, կրթության, դատական համակարգերի ձեւավորման գործում: Այդ մասին ավելի վաղ ներկայացրել էինք 9 կետից բաղկացած առաջարկություններ (տես «Այս պահին ամենաամենաձգելի անհրաժեշտ քայլերը (ամբողջական տարբերակ)՝ հողավոր՝ հետնելալ կայքում. <https://www.Iragir.am/2021/01/17/614608/>):

**Վահան ՇԻՐԽԱՆՅԱՆ,
Սպաների միության նախագահ,
ՀՀ նախկին փոխվարչապետ**

Գրիգոր ԲԱՐՍԵՂՅԱՆ
Հայ մասնագետների խորհրդի
նախագահ,

**Ֆիզիկամաթեմատիկական գիտ. դոկտոր,
Մարի Կյուրիի անվան միջազգային
գիտական մրցանակի դափնեկիր**

ՉԱՐԵՎ ԽՐԱԿՈՒՆՈՒ ՀԱՅՐԵՆԵՊԼՏՈՒՄԸ



← ٤٢ 6

Իր երգը բանաստեղծն սկսում է ազատության համար մարտնչած հերոսների թափված արյան մափն մի երգով, որի տողերը հյուսված են «ազատություն» բառի սկզբնատառերով (տե՛ս 2. հրախուսի, Ազատերգություն, Երևան, 1993, էջ 23).

ԱՅՐ-ը արյունն է թափված,
ԶԱ-ն զոհվածներն անանուն,
ԱՅՐ-ը անդունդ արփավառ,
ՏԻՈՒ-ն տեմչանք է տանջող,
ՈՒ-ն ուրացումը ույժին,
Թ-ն թվականն է ահեղ,
ՅՈՒ-ն յուրացումը ջախիր,
ՆՈՒ-ն նահատակը վերջին:

Խրախուճում հերոսը երագում է մարդու եւ մարդկային հաղթանակի մասին: Հայրենապատումն սկիզբ է առնում ազատության երգից: Պատճառն ակնհայտ է. ավանդական հողերի, օջախների կորստից է ծնվել Սփյուռքը, որի վերականգնման հայի համար կլինե՞ր փրկության բաղձանք է:

Ազատության նվաճումը միշտ էլ ուղեկցվել է արյան կորստով: Անանուն զոհվածների թափված արյան գնով ձեռք բերված ազատությունը թանկ է: Ժամանակն է վերագտնել այդ ազատությունն ու այլևս չունենալ նահատակներ:

Ֆրանսիական հեղափոխության 200-ամյակին նվիրված «Ազատություն» բանաստեղծության մեջ գրողը կոչ է անում բոլորին միանալ եւ տոնել ազատության վերագտնումը: Իր ժողովրդի ազատությունը տենչող բանաստեղծի համար ցնծությունն ազգություն չի ճանաչում, քանի որ ազատ լինելու իրավունք ունեն բոլոր ազգերն ու ժողովուրդները: Ազատության ծիծեռնակը պիտի ձգվի արեւելքից արեւմուտք, եւ նրա ցնծությանը պետք է միանան բոլորը (նույն տեղում, էջ 25).

Ու գիշերն ալ իրախաղությունն անմախղմբաց
թող ըլլա,
Զրթիռները մեծադրողոյ թող պայթին,
Արծազանքն մինչեւ Գրատ, Լուսմբագ
իբր հարուր մեկ եւ հազար մեկ թնդանոթ,
արյամբ շահված,
բազկով պահված
հաղթանակներն ավետող չորս ծագերուն...
Լուսաստղերով թող ողորկի

*Բարձրականար աստեղագարդ էրկինքն ազատ
հառաջատար ժողովուրդներու*

Լույս լույս գույն գույն բոբբոք աստղեր թող
թոթափին

Թող ցղանան
սիրով, խանդով կենսապառ
աչքերուն մեջ
սպիտակին թուփին սեփն դեղնորակին
խափշիկին

Նոր կայծ ըլլան...

Ոսկու կայծի պես ազատությունը պիտի անցնի սրտից սիրտ, բոլորը պիտի շուրջպար բռնեն, ազատության գաղափարով համակվեն, քանի որ արդարության, խաղաղության տոն է:

«Ծանուցում» բանաստեղծության մեջ ազատության գաղափարն արտահայտվում է արյան գույնը խորհրդանշող սիմվոլներով (նույն տեղում, էջ 27).

Կարմիր գիրերն անմտորեն կը վառին—
Արյուն կիյնա ջուրերուն մեջ լճացած.
Կարմիր գիրերն անգթորեն կը մարին—
Արյունը ջուր կը կտրի,

Հետո նորեն կարմիր գիրերն ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ
կը գրեն,

Ջուրերուն տեղ արդյուն կըլլա լճացած...
Պողոտաները թաց են – լույսը խխում
Հրապարակը բաց է – լույսը հոում
Անձրերը յազ է:

Կարմիրը, արյունը խորհրդանշում են ազատությունը, իսկ անդադար մաղող անձրեւը՝ լազր: Վերագտած ազատության մասին են

վկայում փողոցով հոսող արյան ալիքները: Ու
չնայած ազատությունը կա, բայց լսվում է մաեւ
լացի ձայնը, քանի որ ազատության ձեռքբե-
րումն ուղեկցվել է մեծագույն կորուստներով:

Շարունակելի

ՄԵՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

**ՔՐԻՍՏՈՒՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆ**

Կրոնական, մշակութային,
լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան»
թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624
խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հեռախոս՝ (010) 517 280

Էլ. փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com

web կայք՝
krishayas.wordpress.com

Ստոր. տպագր. 2.03.2021 թ.

Տապառնակ՝ 1225